2010, ՄԱՅԻՍ Ա, ԹԻՎ 9 (317)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

### ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

*Սիրելի՛ ժողովուրդ հայոց*

*Ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս ողջույն ենք հղում ձեզ բերկրաշատ հոգով եւ շնորհավորում լուսավոր ու պայծառ երկու տոների՝ Հաղթանակի եւ խաղաղության եւ Շուշիի ազատագրության օրվա կապակցությամբ:*

*Այս տարի տոնախմբում ենք 65-րդ հոբելյանական տարեդարձը ժողովուրդների մեծ հաղթանակի, որով վերջ դրվեց Երկրորդ համաշխարհային պատերազմին: Մայիսի 9-ին խաղաղության ավետիսը հնչեց աշխարհին՝ ուրախությամբ համակելով եւ լուսավորելով հոգիները նաեւ մեր ժողովրդի զավակների, ովքեր հերոսական մասնակցություն են ունեցել ֆաշիզմի ու բռնության դեմ պայքարում եւ հաղթանակի ձեռքբերման գործում: Աշխարհասփյուռ մեր ժողովուրդն այդ մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, տարբեր երկրների ազատագրության համար մղվող պայքարում պաշտպանում էր նաեւ խաղաղությունն ու ազատությունը Հայաստանի՝ համայն հայության Հայրենիքի: Արդարեւ, հայրենական պատերազմ էր նաեւ համայն հայության համար:*

*Այսօր վերստին, անդրադառնալով մարդկությանը մեծագույն զոհեր ու զրկողություններ պատճառած պատերազմի դեպքերին ու իրադարձություններին, հիշում ենք նաեւ պանծալի ուղին հայկական դիվիզիաների, ռազմական տաղանդն ու հաղթանակները հայ զորահրամանատարների, քաջությունն ու սխրանքը հայ զինվորների, պարտիզանական ջոկատներում, դիմադրության շարժումներում ներգրավված հայազգի անձնվեր դուստրերի եւ ուստրերի: Հիշում ենք գյուղերում եւ քաղաքներում մեր ժողովրդի հոգնաբեկ աշխատանքն ու նվիրումը, որոնց արդյունքներով հնարավոր դարձան ռազմական հաղթանակները: Դժվարին ու հերոսական այդ օրերի անմոռանալի հիշատակներից են սփյուռքահայության նախանձախնդիր արձագանքը Գեւորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոչին եւ դրամահավաքը, որով արագորեն կազմավորված տանկային զորասյուները մարտերի մեջ մտան ռազմաճակատների առաջին գծում: Փոքրաթիվ մեր ժողովուրդն իր բոլոր ուժերով մեծ մասնակցություն բերեց պատերազմին եւ մեծ կորուստներ կրեց՝ հանուն մեր Հայրենիքի ազատ կյանքի, հանուն խաղաղ ու բարօր աշխարհի:*

*Հայրենասիրության եւ անվեհեր ոգու այսպիսի օրինակներով ծնունդ առավ եւ հաղթանակեց Արցախի ազատամարտը: Արցախի ազատագրության հույսը երբեք չի մարել մեր ժողովրդի հոգում, նաեւ՝ այն տարիներին, երբ արցախցի բազմահազար զորավարները, քաջարի սպաներն ու զինվորները մարտնչում էին Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում: Աստվածօրհնյալ այդ հույսով լուսավորվեց Շուշիի ազատագրության առավոտը, եւ այսօր, գոհություն Աստծուն, հավատավոր մեր ժողովուրդն իր խաղաղ կյանքի հաղթանակներն է կերտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մեր ժողովրդի միասնական ջանքերով վերակառուցվում է նաեւ Շուշին՝ Արցախի ավանդաշատ մայրաքաղաքը, միշտ նույն անխախտ հավատով, որ համընդհանուր ճանաչում պիտի գտնի արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքը:*

*Մենք աղոթում ենք, որ բոլոր երկրներն ու ժողովուրդները այսօր ամրանան կամքի մեջ՝ ջանքեր բերելու աշխարհում խաղաղության հաստատման, համագործակցության զորացման եւ բարօր կյանքի կերտման ուղղությամբ: Բարձրյալի օրհնությունն ենք հայցում աշխարհին եւ մեր ժողովրդին, որպեսզի բարի արդյունավորմամբ իրագործվեն մեր նպատակները՝ ի սեր հայրենի երկրի բարգավաճումի, ամենուր ապահով ու բարօր կյանքի, հավատքով պայծառ, գիտությամբ ու մշակույթով ծաղկուն մեր ներկայի ու գալիքի:*



Ազատագրված Շուշիում

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*3 մայիսի*

### Բադեն-Վյուրթեմբերգի Ավետարանական-Լյութերական եկեղեցու հոգեւոր սպասավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԳԴՀ Բադեն-Վյուրթեմբերգի շրջանի Ավետարանական-Լյութերական եկեղեցու հոգեւոր սպասավորների պատվիրակությանը՝ գլխավորությամբ վեր. Մանֆրեդ Վագների եւ ուղեկցությամբ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի:



Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունն իր գոհունակությունը հայտնեց Գերմանիայի հայոց թեմի աջակցությամբ կայացած այս հանդիպման համար եւ անդրադարձավ Հայ Եկեղեցու բազմադարյան պատմությանն ու առաքելությանը: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը վերհիշեց իր ուսումնառության տարիները Վիեննայում եւ հովվական ծառայությունը Գերմանիայում:

Իր խոսքում վեր. Մանֆրեդ Վագներն իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության համար:

Հանդիպմանը ներկա էր նաեւ Սլովակիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու եպիսկոպոսաց խորհրդի ղեկավար Միլոշ Կլատիկը:

### Շվեյցարիայի հայոց թեմի ներկայացուցիչներին

Ապրիլի 26-ից մայիսի 2-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում էին գտնվում Շվեյցարիայի հայոց թեմի երկու համայնքների՝ Նեոշաթել-Ժուրայի եւ Ցյուրիխի եկեղեցական վարչությունների ատենապետեր Ալեն Ուգնատը եւ Վռամշապուհ Թերզյանը՝ գլխավորությամբ հոգեւոր հովիվ Տ. Շնորհք քհն. Չեքիջյանի, որ ժամանել էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով:

Վեհափառ Հայրապետի հետ տեղի ունեցած հանդիպումների ընթացքում քննարկվեցին շվեյցարահայ համայնքների հոգեւոր, վարչակազմակերպական եւ ազգային ու մշակութային կյանքին առնչվող հարցեր:

Հյուրերը շնորհակալություն հայտնեցին Նորին Սրբությանը՝ ջերմ ընդունելության, հոգատար վերաբերմունքի եւ ուշադրության համար: Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց պատվիրակներին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ դրսեւորած որդիական սիրո եւ հավատարմության համար: Ի գնահատություն երկարամյա հոգեւոր ծառայության եւ վաստակի՝ Վեհափառ Հայրապետը քահանայական լանջախաչ կրելու իրավունք շնորհեց Տ. Շնորհք քհն. Չեքիջյանին:

*13 մայիսի*

### Լեհ սենատոր Լուկաշ Աբգարովիչին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի Սեյմի լեհ-հայկական պատգամավորական բարեկամական խմբի անդամներին՝ սենատոր Լուկաշ Աբգարովիչի գլխավորությամբ:



Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունը մեկ անգամ եւս իր ցավակցությունը հայտնեց Լեհաստանի նախագահ Լեհ Կաչինսկու, նրա տիկնոջ եւ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների ու եկեղեցականների մահվան կապակցությամբ՝ վստահեցնելով, որ լեհ ժողովուրդը կհաղթահարի այդ ցավը՝ Աստծուն ապավինելով:

*«Մենք ճանաչում ենք լեհ ժողովրդին որպես բարեպաշտ աստվածասեր եւ աղոթարար ժողովուրդ, եւ ուրախությամբ պիտի նշենք, որ ջերմ են մեր հարաբերությունները ինչպես Լեհաստանի պետական իշխանության, այնպես էլ եկեղեցական հետ: Մեր երկու ժողովուրդների միջեւ կապերն ունեն դարերի պատմություն, ինչի ապացույցը Լեհաստանի հայ համայնքի մշտական գոյությունն է... Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ եւ Ձեր ժողովրդին՝ հայցելով Բարձրյալից, որ Իր ամենազոր Աջի ներքո պահի ու պահպանի մեր երկու երկրներին, ժողովուրդներին ու Եկեղեցիներին»,-* ասաց Վեհափառ Հայրապետը:

Իր խոսքում հայկական արմատներ ունեցող սենատոր Աբգարովիչը նշեց, որ Լեհաստանում բարձր են գնահատում այն ջանքերն ու եռանդը, որ Լեհաստանի հայությունը ներդրել եւ ներդնում է երկրի բարգավաճման ու մշակույթի զարգացման գործում:

Պատվիրակությանն ուղեկցում էին ՀՀ-ում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ժդիսլավ Ռաճցինսկին եւ Լեհաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Գալոյանը:

# Ի Տեր հանգյավ Տ. Տիրայր արք. Մարտիկյանը



Խոր ցավով տեղեկացնում ենք, որ մայիսի 11-ի առավոտյան, կյանքի 80-րդ տարում, Բուլղարիայի Սոֆիա քաղաքում առաջնորդական իր առաքելության ընթացքում վախճանվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու նվիրյալ եւ բազմավաստակ սպասավոր, Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Տիրայր արք. Մարտիկյանը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գերագույն հոգեւոր խորհուրդն ու Հայ Եկեղեցու ողջ հոգեւորականաց դասն աղոթարար սրտով սգում են հոգելույս Տիրայր արք. Մարտիկյանի մահը:

Հանգուցյալ սրբազան հոր մարմինը կամփոփվի Բուխարեստում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

## Կենսագրական

Տիրայր արք. Մարտիկյանը (ավազանի անունով՝ Տիգրան Մարտիկյան) ծնվել է 1930 թ. մայիսի 24-ին Բեյրութ քաղաքում (Լիբանան): Նախնական կրթությունն ստացել է տեղի Սահակյան եւ Աբգարյան վարժարաններում, ապա 1944-1947 թթ.՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանում: 1947 թ. հայրենադարձվել է: Երեւանում մի քանի ամիս սովորել է Օտար լեզուների ինստիտուտում, ապա ուսումնառությունը շարունակել Գեւորգյան հոգեւոր ճեմարանում: 1951 թ. ձեռնադրվել է սարկավագ, 1955 թ.՝ կուսակրոն քահանա, 1956 թ. ստացել է վարդապետական գավազան: 1955-1958 թթ. պաշտոնավարել է Բաքվում, 1958 թ. ընտրվել Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ: 1960 թ. Ռումինահայոց եւ Բուլղարահայոց թեմի պատգամավորական ժողովի կողմից ընտրվել է թեմի առաջնորդ եւ այդ պաշտոնը վարել մոտ 50 տարի: 1964 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1980 թ., ի գնահատություն երկարամյա եւ նվիրյալ ծառայության ու վաստակի, ստացել է արքության աստիճան եւ պատիվ: Երջանկահիշատակ սրբազանը պարգեւատրվել է Հայ Եկեղեցու եւ Ռումինիայի պետական մի շարք բարձր շքանշաններով ու պարգեւներով:

# Ալեքսանդր Դվորկինը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ Արմավիրում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մայիսի 4-10-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին էր ժամանել նշանավոր ռուս աղանդագետ Ալեքսանդր Դվորկինը: Այցի նպատակը Հայաստանում գործող ժամանակակից աղանդների մասին դասախոսություններ կարդալն էր: Այցի շրջանակներում Ալ. Դվորկինը դասախոսություններով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների, Արմավիրի թեմի հոգեւորականաց դասի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան հոգեւոր դպրանոցի սաների, ԵՊՀ ուսանողների, Գավառի պետական համալսարանի ուսանողների եւ դասախոսական կազմի, Երեւան քաղաքի հանրակրթական դպրոցների Հայ եկեղեցու պատմության ուսուցիչների, Երեւանում գործող երիտասարդական միությունների համար՝ իր գիտելիքները եւ աղանդավորության դեմ պայքարի փորձը փոխանցելով դասախոսությանն ունկնդիր մասնակիցներին:

***

Ալեքսանդր Դվորկինը մայիսի 4-ին հանդիպում ունեցավ նաեւ Արմավիրի թեմում:

Հանդիպմանը մասնակցում էին հոգեւորականներ, քաղաքի Հայ Եկեղեցու պատմության ուսուցիչներ եւ եկեղեցասեր երիտասարդներ: Աշխարհի տարբեր կողմերում աղանդավորական բազում կազմակերպությունների ակտիվ գործունեության պատճառով խաթարվում են շատ ու շատ անմեղ մարդկային հոգիներ, շեղվում է նրանց կյանքի բնականոն ընթացքը: Ինչպես ամենուր, Հայաստանում եւս գործող ժամանակակից աղանդների զոհեր են դառնում թե՛ դպրոցահասակներ, թե՛ երիտասարդներ եւ թե՛ տարեց մարդիկ:

Դասախոսությունն սկսվեց Տերունական աղոթքով: Այնուհետեւ թեմի առաջնորդ Սիոն սրբազանը ներակայցրեց դասախոսության թեման եւ շնորհակալություն հայտնեց Դվորկինին՝ Արմավիրի թեմում հանդիպում ունենալու առիթով: Իսկ Ալեքսանդր Դվորկինին եւ նրա գործունեությանը ներկաներին ծանոթացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Դավիթ սարկավագը: Ներկաները հետաքրքրությամբ ունկնդրեցին Դվորկինի խիստ ուսանելի դասախոսությունը եւ փորձեցին իրենց հետաքրքրող հարցերի վերաբերյալ լսել նրա կարծիքը:

*Առաջնորդարան*
*Արմավիրի թեմի*

# Էկումենիկ պաշտոնյաների հավաք ԵԽԽ-ի Բոսեի դպրոցում

Մայիսի 3-6-ը ԵԽԽ-ի Բոսեի Էկումենիկ դպրոցում տեղի ունեցավ պաշտոնյաների հավաք, որին մասնակցում էր շուրջ 60 ներկայացուցիչ՝ աշխարհի տարբեր երկրներից ու եկեղեցիներից: Հավաքի ընթացքում մասնակիցները ծանոթացան ԵԽԽ-ի ընթացիկ գործունեությանը եւ առաջիկա հրամայականներին: Լսվեցին զեկույցներ 2011 թ. Ջամայկայի խաղաղասիրական հավաքի, 2013 թ. Բուսանում (Հարավային Կորեա) կայանալիք ԵԽԽ 11-րդ ասամբլեայի մասին: Իրենց գործունեությունը ներկայացրին ԵԽԽ-ի «Հավատք եւ կարգ» հանձնախմբի անդամները:

Ժողովականներին իր գործունեությունը ներկայացրեց նաեւ ԵԽԽ-ի գլխավոր քարտուղար վերապատվելի դոկտոր Օլավ Թվեյթը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էր Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի տնօրեն Տ. Հովակիմ եպս Մանուկյանը, իսկ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից՝ նույնանուն գրասենյակի վարիչ Տ. Նարեկ եպս Ալեմեզյանը:

*Միջեկեղեցական*
*հարաբերությունների բաժին*

# Ջրվեժի Սբ Կաթողիկե եկեղեցու ուխտի օրը

Տարիներ առաջ, Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս Քարամյանի օրհնությամբ, մայիսի առաջին կիրակին սահմանվեց որպես Ջրվեժի Սբ Կաթողիկե եկեղեցու ուխտի օր:

Այս տարվա մայիսի 2-ը՝ առաջին կիրակին, համընկել էր Սբ խաչի երեւման տոնին: Ջրվեժ գյուղում կրկնակի տոն ու տոնախմբություն էր: Ժողովուրդը մեծ ոգեւորությամբ դիմավորեց Առաքել սրբազանին, եւ հենց թեմի առաջնորդն էլ մատուցեց սբ Պատարագ: Սրբազանը քարոզ խոսեց օրվա խորհրդի մասին՝ հորդորելով հավատացյալներին ապավինել Տիրոջ սբ խաչի զորությանը: Եկեղեցին լեփ-լեցուն էր: Անգամ Մոսկվայից էին ուխտավորներ եկել: Պատարագից հետո Առաքել սրբազանն օծեց եկեղեցում գտնվող՝ Քրիստոսի Մկրտության եւ Խաչելության նոր սրբապատկերները: Ժողովրդին բաժանվեց երիտասարդաց միության ջանքերով հրատարակված «Ճրագ» պարբերականը: Եկեղեցու «Սաղմոս» երգչախումբը հանդես եկավ փոքրիկ համերգով:

Տոնը շարունակվեց դրսում: Հորդառատ անձրեւն ամեն կերպ փորձում էր խափանել տոնախմբությունը, սակայն ազգագրական պարի ոգին հաղթող գտնվեց: Անձրեւ էր, իսկ մարդիկ պարում էին ու պարում: Ներկաներին մատաղ մատուցվեց: Ուխտավորների, համայնքի անդամների եւ հյուրերի համար տիկնանց միությունը դահլիճում տոնական սեղան էր բացել: Բոլորն ուրախ էին եւ ոգեւորված, եւ շուտով երգն ու պարը նոր թափ առավ՝ արդեն դահլիճում:



Տոնակատարությանը զգալիորեն աջակցել էր Ջրվեժի գյուղապետարանը՝ գյուղապետ Ռոբերտ Պետրոսյանի գլխավորությամբ:

Այդ օրն Առաքել եպս Քարամյանի օրհնությամբ տեղի ունեցավ նաեւ «Խրիմյան Հայրիկ» սոցիալ-կրթական կենտրոնի համակարգչային բաժնի բացումը:

Ջրվեժ գյուղում տոն էր...

# ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիսի 7-ին, Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արք. Զաքարյանի գլխավորությամբ, Լիոնի Սբ Հակոբ եկեղեցում տեղի ունեցավ թեմի հոգեւորականաց դասի տարեկան համագումարը:

Ժողովին Մայր Աթոռ Սբ Էջմիածնից ներկա էր Տ. Ադամ քհն. Մակարյանը, ով ընթերցեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության եւ գնահատանքի գիրը՝ ուղղված Ֆրանսիայի հայոց թեմի հոգեւորականներին:

Համագումարում ընթերցվեց եւ վավերացվեց նախորդ համագումարի արձանագրությունը, եւ հաստատվեց օրակարգը, ապա առաջնորդ սրբազանն անդրադարձավ հովվական ծառայության կոչված նոր քահանաների նշանակումներին, թեմում առկա խնդիրների հաղթահարմանն ուղղված աշխատանքներին, քննարկվեցին հոգեւորականների ծառայության, ինչպես նաեւ ծեսի հետ կապված այժմեական հարցեր: Տ. Մյուռոն ծ. վրդ. Գըվըըգյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ «Խոսք եւ ներշնչում» խորագրով՝ անդրադառնալով Աստվածաշնչի գրքերի հեղինակների շարադրանքի հարցերին եւ Սուրբ Գրքի ներշնչող զորությանը:

Ընտրվեց ծիսական հարցերը հավաքագրող հանձնախումբ:

*Ֆրանսիայի հայոց թեմ*

# Համբարձման տոնը Մայր Աթոռում



*Համբարձման տոնը Հայոց Եկեղեցին կատարում է Զատիկից քառասուն օր անց, քանի որ Քրիստոսը հրաշափառ հարությունից հետո քառասուն օր երկրի վրա մնաց, ապա Իր հարուցյալ ու փառավորյալ մարմնով երկինք համբարձվեց:*

*Քանի որ Ս. Հարության տոնը միշտ կիրակի օրն է կատարվում, ուստի Հարությունից քառասուն օր անց նշվող Համբարձումն էլ միշտ հինգշաբթի օրն է ընկնում:*

*Մայիսի 13-ին, այսինքն՝ հինգշաբթի օրը, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ նշվեց Տիրոջ Համբարձման տոնը: Պատարագիչն էր Սահակ եպս Մաշալյանը:*

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

## Ժողովրդական արարողությունը

*Սկիզբը՝ թիվ 8*

Գրիգոր Տաթեւացին Քրիստոսին նվիրված բոլոր տոների կատարումն է համարում Համբարձումը: Տաթեւացին այս տոնն ուրախության օր է անվանում, որովհետեւ Հիսուսը «ցորենի հատիկի նման մեռավ ու հարություն առավ եւ խաչի վրա, անապական մարմնով, խաղողի ողկույզի նման ճմլվելով՝ համբարձվեց ու ամփոփվեց երկնային հնձանում»:

Շարունակելով Տաթեւացին ասում է, որ Քրիստոսի համբարձմամբ երկնքի ճանապարհը բացվեց մարդկանց համար, եւ տրվեց «մեզ յամարձակութիւն յուսալոյ ի նոյն» եւ «մտանել մարմնով ի յաւիտենական ժառանգութիւն», քանի որ մինչ այդ մարդիկ կարող էին միայն դժոխք իջնել, բայց ոչ՝ երկինք բարձրանալ, ինչպես «նավը կարող է հոսանքով վար իջնել, բայց ոչ երբեք՝ վեր ելնել»:

Բացատրելով, թե ինչու Քրիստոսը, լինելով կյանքի աղբյուր, երկրից երկինք համբարձվեց, ասում է, թե ջրի հատկությունն է այնքան բարձրանալը, որչափ կարող է իջնել: Այսինքն՝ եթե լեռան կատարից բխող աղբյուրն իջնում է ձորը, այնտեղից ջուրը փողորակներով կարող է բարձրանալ մի այլ լեռ՝ մինչեւ այն բարձրության, որից ինքը բխել էր, եւ բացատրելով խոսքը, ասում է, թե բարձր լեռն է ամենակալ Աստված, եւ Նրանից բխած աղբյուրն է Որդին: Նա, իջնելով երկիր, նորից բարձրանում է մինչեւ Իր Հայրը: Այս օրինակով Տաթեւացին ասում է, թե քրիստոնյաների հավատը մինչեւ երկինք է հասնում, իսկ անհավատինը կարճ է եւ չի հասնում երկնքի արքայությանը, որովհետեւ հավատում է անցավորներին եւ անցավոր փառքին, իսկ մենք հավատում ենք Քրիստոսին՝ ճշմարիտ հավատով եւ բարի գործով եւ հաստատուն հույսով ակնկալում ենք՝ «Հասանիլ խոստացեալ աւետեացն եւ անանց կենացն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր»:

Ագաթանգեղոսի Պատմության «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» բաժնում համբարձման մասին ասվում է, որ Հիսուսը երկինք համբարձվեց, որպեսզի կատարվի սաղմոսների այն տողը, թե «Աստված համբարձվեց օրհնությամբ»: Նույն ձեւով առաքյալներին պատվիրեց. «Նստեցեք Երուսաղեմում, եւ Ես Իմ Հոր ավետիսը ձեզ կառաքեմ», որով եւ կատարվեցին Ամովս մարգարեի խոսքերը, թե «Նա, Ով պատրաստում է Իր համբառնալը դեպի երկինք, Ով Իր ավետիսն է հաստատում երկրում, Ով վերեւ է կանչում ծովի ջրերը եւ հղում երկրի երեսին, Ամենակալ Տեր է Նրա անունը»:

*Շարունակությունը՝ էջ 3*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ
## (1590-1629?)

*Սկիզբը՝ թիվ 4-8*

Հետաքրքիր դասավորվեցին Մելքիսեդեկ աթոռակցի եւ Կեսարացու հարաբերությունները: Վերջինս 1613 թվին Հովհաննես Խուլի, Զաքարիա Վանեցու եւ Գրիգոր Դարանաղեցու դեմ պայքարում տանուլ տվեց եւ հեռացավ Կ. Պոլսից: Սակայն նա չէր հրաժարվել պատրիարքությունը վերադարձնելու մտքից: Նրանց տապալելը շատ էլ դժվար չէր, քանի որ պայքարը հիմնականում պետական մարմինները շահագրգռելու ճանապարհով էր կատարվում: Եվ, իրոք, նրան հաջողվեց կրկին դառնալ պատրիարք՝ տապալելով հակառակորդներին: Այդ ժամանակ էլ նա կապերի մեջ մտավ Մելքիսեդեկի հետ՝ նամակներում օգտագործելով կարգադրող ոճ, ինչը հնարավոր էր նրա պատրիարք լինելու դեպքում: Նամակը գրվել է, հավանաբար, 1615 թվի սկզբներին, երբ Մելքիսեդեկը գտնվում էր Սպահանում եւ փորձում էր Դավիթ կաթողիկոսին հեռացնել Էջմիածնից, որպեսզի տիրի Մայր Աթոռին: Պատրաստվում էր թուրքական նոր արշավանք պարսիկների դեմ, եւ Մելքիսեդեկը կամենում էր, որ թուրքերն իրեն ճանաչեն կաթողիկոս եւ ոչ թե Դավթին, քանի որ վստահ էր, որ թուրքերը կհաղթեն: Նա մոտ էր Խուլի հետ եւ հույսը դրել էր նրա վրա: Սակայն նորից պատրիարք դարձած Կեսարացին, որ բոլորովին չէր համակրում Մելքիսեդեկին, միանգամայն այլ պատասխան է ուղարկում նրան:

Իր նամակում Կեսարացին պարզ գրում էր, որ եթե Մելքիսեդեկը կատարի ինչ-ինչ բաներ, ապա նրան կճանաչեն ուղղափառ կաթողիկոս, այլապես մեղքի պատասխանատվությունը թողնում էր նրա խղճին: Կեսարացին նրան եւ ուրիշների մեղադրում է թուլամորթության, ինչպես նաեւ արծաթասիրության մեջ, լպիրշ մարդկանց նվիրակ նշանակելու եւ արժանավոր մարդկանց բանադրելու հարցում, երբ նրանք հանդգնում են ճշմարիտն ասել: Մեղադրանքներից են սբ Հռիփսիմեի ոսկորների վաճառքը, Գրիգոր Լուսավորչի Աջի Էջմիածնից դուրս բերելը, մեծ թվով կաթողիկոսների առկայությունը (ի դեպ՝ իսկական կաթողիկոս է ընդունում Դավթին), Հռոմի պապին նամակ գրելը եւ այլն: Նա խորհուրդ է տալիս, որ եթե պապին ուղարկված նամակն ինքը չի գրել, ապա պապին նամակ գրի եւ հրաժարվի այդ նամակի հեղինակությունից: Նա քննադատում է Մելքիսեդեկին՝ նրա ողջ անցյալի համար: Դժվար չէ տեսնել, թե ինչ կարծիք ունեին Մայր Աթոռի մասին Կ. Պոլսի պատրիարքարանում:

Նկատվում են միտումներ՝ Հռոմեական եկեղեցուն միանալու: Շատերը, որոնք ազգային եկեղեցու հարցում տկար էին, պատրաստ էին կաթոլիկություն ընդունել, որպեսզի օգտվեն պապականության եւ կաթոլիկ Ֆրանսիայի աջակցությունից: Ֆրանսիայի դեսպանները հաճախ կաթոլիկության քարոզչի դեր էին ստանձնում՝ կաթոլիկների համար պատրաստ միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Հենց այդ պաշտպանությունից օգտվելու համար էլ նշանակալից թվով մարդիկ պատրաստ էին կաթոլիկանալ: Մերձավոր եւ Միջին Արեւելքում այդ նույն ժամանակ ուժեղացել էին լատին քարոզիչները՝ ֆրանցիսկյանները, դոմինիկյանները, հիսուսյանները եւ թեաթինյանները, որոնք եռանդով փորձում էին տարածել կաթոլիկությունը: Նրանք խոստանում էին հավատափոխներին վերցնել իրենց քաղաքական պաշտպանության ներքո: Քարոզիչների համար ամենամատչելի տարրը հայերն էին, որը հալածված էր թե՛ տնտեսապես եւ թե՛ քաղաքականապես: Կաթոլիկների քարոզին նպաստում էին ոչ միայն ունիթորների մնացորդները, այլեւ լատինների մոտ դաստիարակվածները, որոնք վեր էին աճում կաթոլիկության ջատագովների: Սրանք ձգտում էին մերձենալ լատիններին, բայց ոչ ուղղված ազգության դեմ, այլ գործել նույն ազգի մեջ՝ նպատակ ունենալով հայ ազգային գործիչներին էլ ներգրավել այդ հարցի մեջ:

Հռոմեացիները ժողովրդի կողմից սկսեցին ֆրանգ կոչվել, ինչը ծագում է ֆրանսիացիների անունից: Պատճառն էլ այն էր, որ Ֆրանսիայի դեսպանությունը բոլոր հռոմեադավաններին վերցնում էր իր հովանավորության ներքո: Կաթոլիկ եկեղեցի ասելով՝ հասկացվում էր Ընդհանրական կամ Տիեզերական եկեղեցի, սակայն իրականում այդ անունը պահպանեց պապական եկեղեցին: Հայ կաթոլիկներն իրենց ուղղափառ են անվանում, որն իբր համարժեք է կաթոլիկին: Իրականում «ուղղափառը» հունարեն «օրթոդոքսի» թարգմանությունն է: Կաթոլիկները դա հույներից են վերցրել: Հայ հռոմեադավանները, չնայած ամպագոռգոռ հայտարարությունների, մեծ մասամբ շարունակում էին հայ մնալ եւ միայն մի փոքր հատվածն էր, որ ավելի ուշ մահմեդականացավ:

Հովհաննես Խուլը լատինամետ պատրիարքներից էր, որը մի քանի անգամ նստեց պատրիարքական աթոռին: Պատրիարք էր եղել նաեւ նրա կողմնակիցներից Զաքարիա Վանեցին: Երեք անգամ էլ պատրիարքական աթոռին էր նստել Կեսարացին, որն իր վերջին աթոռակալության ժամանակ այդպիսի կծու նամակ էր գրել Մելքիսեդեկ աթոռակցին: Մելքիսեդեկն ինքն էլ հույսը դրել էր լատինամետների վրա: Մոտ էր Խուլի հետ, չնայած այն բանին, որ նա էր նրան զրկել Կ. Պոլսի պատրիարքությունից: Նա լավ հարաբերությունների մեջ էր նաեւ Զաքարիա Վանեցու հետ: Սակայն լատինամետները նրա հույսերը չարդարացրին, եւ երբ Կեսարացին ուժեղացավ պատրիարքական աթոռին, նա խզեց իր կապերը թե՛ Խուլի եւ թե՛ Զաքարիայի հետ: Մելքիսեդեկը դրանից հետո ուղեւորության մեկնեց Երուսաղեմ, որտեղ մնաց երեք տարի:

Կեսարացին, դատելով մի հիշատակարանի հաղորդածից, պատրիարք էր 1618 թվին: Նրա պատրիարք դառնալով՝ վիճակների կամ թեմերի բաժանման խնդիրը մնացել էր նույնությամբ, ինչպես բաժանել էին Խուլը, Վանեցին եւ Դարանաղեցին: 1617 թվին Զաքարիա Վանեցին կառուցեց Սկյուտարի Սբ Կարապետ եկեղեցին, ինչը հավաստում է, որ նա շարունակում էր Ասիակողման առաջնորդ հանդիսանալ, ինչպիսին դարձել էր 1613-ին: Այդ մասին է հավաստում նաեւ մեկ այլ հիշատակարան, որտեղ Զաքարիան ժողովրդական լեզվով Չքո է անվանված: Իր բաժնում նույն կացությունն ուներ նաեւ Դարանաղեցին: Նա Ռոտոսթոյի առաջնորդն էր եւ բնակվում էր Ղալաթիայում: Սրանք Կեսարացու հետ հաշտ չլինելով հանդերձ՝ շարունակում էին պահել իրենց վիճակները:

Պատրիարքական աթոռի համար պայքարը շուտով ձեռք բերեց Կեսարացու եւ Խուլի միջեւ անձնական պայքարի բնույթ: Եվ եթե անհաջողության դեպքում Կեսարացին մշտապես ապավինում էր Կեսարիայի իր աթոռին, ապա Խուլը նման հնարավորություն չուներ: Մյուս կողմից նա բնիկ մայրաքաղաքցի էր եւ այնտեղ էլ շատ մարձավորներ ու ազգականներ ուներ: Հայտնի է միայն, որ մի անգամ Կեսարացին կարողացել է նրան փախցնել Պրուսա, սակայն դա իրավունք չի տալիս կարծելու, որ նա Պրուսայի հայերի առաջնորդն էր:



Կեսարացին Պատրիարք մնաց մինչեւ 1619 թիվը, իսկ 1620 թվին պատրիարք է հիշվում Հովհաննես վարդապետը: Խախտվել էր վերը հիշյալ եռյակի միությունը: Խուլից եւ Զաքարիայից անջատվեց Դարանաղեցին: Ասենք, որ նա հենց սկզբից էլ Խուլի նկատմամբ համակրանք չուներ: Նրան դուր չէր գալիս Խուլի լատինամոլ ընթացքը: Նրան Խուլին մերձեցրել էր միայն Կեսարացու կասկածոտ եւ դաժան վարքագիծը: Բայց ի վերջո Խուլի բռնած ծայրահեղ դիրքը նրան հիշյալ երկուսից հեռացրեց: Իր հերթին Կեսարացին փորձեց Դարանաղեցուն իր կողմը գրավել: Իսկ Խուլը եւ Զաքարիան անգամ սկսեցին ուտել պասին եւ օգտագործել ձեթ ու գինի, ինչը Հայոց Եկեղեցու կարգի խախտում էր, սակայն հազիվ թե բավարար փաստ է, որ նրանց համարենք հռոմեադավան դարձած: Այս կերպ շարունակվեց մինչեւ 1624 թիվը:

Իսկ ինչ վիճակ էր Էջմիածնում: Մելքիսեդեկն իր բռնակալ եւ հարկահան բնավորությամբ առաջ բերեց բոլորի զզվանքն ու անտարբերությունը: Փող հավաքվում էր մեծ դժվարությամբ, որը չէր բավարարում նրա եւ նրա մերձավորների ծախսերին: Իսկ պետությանը տրվող ամենամյա 100 թումանի պարտքը կուտակվելով հասել էր 600 թումանի: Դրան ավելանում էին փոխառությունների պարտքերը՝ իրենց տոկոսներով: Ասվում է, որ Մելքիսեդեկը 1622 թվին նամակ ուղարկեց Գրիգոր ԺԵ պապին, սակայն նրա մահվան լուրն առնելով՝ 1623-ին նոր նամակ է գրում Ուրբանոս Ը պապին:

*Շարունակությունը՝ էջ 5*

# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 2*

Համբարձումը նաեւ հայ ժողովրդական ամենասիրված եւ տարածված տոներից է, իսկ համբարձման գիշերը մեր ժողովուրդը պատել է կախարդական խորհրդավոր ու հրաշալի գույներով: Եր-



*Գործ՝ Ե. Թադեւոսյանի*

կինք համբարձված Փրկիչը մեզ այդ գիշեր, ասես, բարձրացնում է առօրյա հոգսերից: Համաձայն ժողովրդական հավատալիքների՝ Համբարձման գիշերը բոլոր ծաղիկներն ու խոտերը սկսում են միմյանց հետ խոսել եւ ասել, թե իրենք ինչ ցավի դեղ են, կամ իրենց արմատների մոտ ինչ է պահված: Եվ ով որ այդ ժամանակ Շահմար օձին խփի, հավասար կիսի ու օձի պոչը ուտի, նա շնորհ կստանա ծաղիկների լեզուն հասկանալու: Շահմարը դա մեր մատենագրության մեջ վկայված արքայիկ օձն է, եւ վերջինի բառացի արեւելյան համարժեքը, քանի որ «շահ» նշանակում է արքա, թագավոր, իսկ «մար»-ն ունի նաեւ «օձ»-ի իմաստ:

Նույն այս համոզմամբ Համբարձման գիշերը մարդիկ երկրի վրա որոնում են ծաղիկների լույսը եւ նրանց լեզուն հասկանալու շնորհը, իսկ երկնքում՝ իրար ձգտող սիրահար աստղերին:

Համբարձման վիճակի նախապատրաստությունն սկսվում էր չորեքշաբթի վաղ առավոտից, երբ աղջիկների յոթական հոգուց բաղկացած խմբերը դուրս էին գալիս ծաղիկ հավաքելու: Յոթ տեսակ ծաղիկ էին հավաքում եւ յոթ աղբյուրից յոթ բուռ ջուր առնում եւ լցնում վիճակի սափորը: Մութն ընկնելուց հետո այդ սափորը պահում էին խոտերի մեջ, որպեսզի գիշերը մնար բաց երկնքի տակ, «աստղունք», այսինքն՝ Համբարձման գիշերվա հրաշալի կախարդանքին ենթարկվելու եւ առավոտյան ցողով օծվելու համար:

Համբարձման գիշերը կապվում էր նաեւ արեւելքի երկու մեծ սիրահարների՝ Լեյլիի ու Մեջլունի երկնային եւ աստեղնային հանդիպման ավանդությանը, համաձայն որի՝ Լեյլին ու Մեջլունը սիրահարներ էին: Մի անգամ, երբ Մեջլունի հայրը նրանց տեսնում է գրկախառնված, վախեցած սիրահարները խնդրում են Աստծուն իրենց երկինք տանել եւ աստղեր դարձնել: Աստված կատարում է նրանց խնդրանքը: Այդ օրվանից տարին մեկ անգամ՝ Համբարձման գիշերը, այդ հավիտենական սիրահար զույգ աստղերը երկնակամարի տարբեր կողմերից մոտենում են միմյանց, համբուրվում եւ շարունակում իրենց ընթացքը՝ մինչեւ հաջորդ տարի: Երկնային լուսեղեն այս համբույրը տեսնելու համար շատերը գիշերը դրսում էին մնում եւ անթարթ աչքերով նայում երկնքին: Ըստ ավանդության՝ այդ համբույրի ականատեսների բոլոր ցանկությունները պետք է կատարվեին: Համբույրի պահին ողջ տիեզերքը մի պահ կանգ է առնում՝ համբուրվում: Միմյանց ողջունում են երկինքն ու երկիրը, տիրում է համընդհանուր ողջագուրանք:

«Սասնա ծռերում» ասվում է, որ Համբարձման գիշերը բացվում էր Միհրի քարայրի փակված դուռը:

Համբարձման գիշերվա ժողովրդական հավատալիքների գեղարվեստական բարձրակետն է Թումանյանի «Անուշը», ուր Համբարձման գիշերը, որպես նախերգանք եւ վերջերգ, շրջանակի նման պատում է ողջ ստեղծագործությունը՝ կանխորոշելով եւ եզրափակելով պոեմի



*Գործ՝ Ա. Դավթյանի*

գործողությունների ընթացքը:

Ժողովրդական այն ըմբռնումը, որ յոթ աղբյուրից հավաքված ջուրն ու ծաղիկը պետք է գիշերը դրսում դնել, որ նրանք լցվեն աստղերի կախարդական զորությամբ, մեծ բանաստեղծն արտահայտել է հետեւյալ քառատողով.

*Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,*
*Խնդիրք արել աստղերին,*
*Փափագ սրտով խընդիրք արել՝*
*Բարի ժպտան իր սերին...*

Պոեմը, սկսվելով Համբարձման գիշերով, ավարտվում է դարձյալ նույն գիշերվա պատկերով՝ խորհրդանշելով անհուն սիրո հարատեւությունը եւ երկնքում ի կատար ածվելը.

*Համբարձման գիշեր,*
*Էն դյութիչ գիշեր,*
*Կա հըրաշալի, երջանիկ*
*վայրկյան.*

*Բացվում են ոսկի երկընքի*
*դըռներ,*
*Ներքեւ պապանձում, լըռում*
*ամեն բան,*
*Ու աստվածային անհաս*
*խորհըրդով*
*Լըցվում բովանդակ*
*նըրա սուրբ գըթով:*

*Էն վեհ վայրկենին չըքնաղ*
*գիշերի՝*
*Երկընքի անհո՛ւն, հեռու*
*խորքերից,*
*Անմուրազ մեռած սիրահարների*
*Աստղերը թըռած իրար են*
*գալիս,*
*Գալի՛ս՝ կարոտով մի հեղ*
*համբուրվում*
*Աշխարհքից հեռո՛ւ, լազուր*
*կամարում:*

*Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ*
*Բանասիրական գիտ. թեկնածու*

**ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ**

# «Հայր մեր»-ի մեկնությունը

*Սկիզբը՝ թիվ 7*

***«Մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր»:***

Պաղատանքների խոսք է. սկզբում ասաց, թե՝ «Թող Քո կամքը լինի», այսինքն՝ թող երկրում մարդիկ լինեն այնպես, ինչպես որ երկնքում հրեշտակներն են: Բայց քանի որ նրանք անկարիք բնություն են, Աստծուց հաց չեն հայցում, իսկ մենք, որ մեր մարմնի տկարության պատճառով կարիքներ ունենք, սակավ պետքերով՝ միայն հացով [բավականանալով]՝ կարող ենք նմանվել նրանց:

Նախաստեղծ մարդը դրախտում բավականանում էր միայն Աստծուց իրեն պարգեւված մրգով, որ անմեղների կերակուրն էր, իսկ հացը իբրեւ կերակուր [Աստված] տվեց մեղավորներիս. Ադամի՝ դրախտից ելնելուց հետո Նա հրամայեց նրան ուտել երեսի քրտինքով (տե՛ս Ծննդ. Գ 19): Թեեւ մարդը պատվիրանազանցությամբ զրկվեց անմեղներին ուտել հրամայված առաջին կերակուրից, բայց այս երկրորդ կերակուրով, որ հրամայեց ուտել քրտինքով, զարդարեց փառքով, ինչպես նախկինում, եւ այն կարող է երանելի դարձնել, ըստ այն խոսքի, թե՝ «Դու քո ձեռքի վաստակը պիտի ուտես. երանի՜ քեզ, դա լավ պիտի լինի քեզ համար» (Սաղմ. ՃԻԷ 2), եթե այն զրկանքով ու հափշտակությամբ չէ, ինչպես որ ասվում է, թե՝ «Մշակն իր վարձքին արժանի է» (Ղուկ. Ժ 7, Ա Տիմ. Ե 18):

Խնդրելով միայն հաց՝ արգելում է մյուս բոլոր ավելորդ բաներից, որպեսզի ջանանք անհրաժեշտի համար միայն եւ հրաժարվենք զանազան համերից, տեսակ-տեսակ պաճուճանքներից ու զարդերից, որովհետեւ այդ ամենի խորհրդակիցը փորձիչն է՝ սատանան: Չէ՞ որ մեր Տիրոջն ու Աստծուն նա ասաց, թե՝ «Ասա՛, որ այդ քարերը հաց դառնան» (Մատթ. Դ 3):

***Հանապազօրյա,*** այսինքն՝ ամենօրյա, որ տվել է եւ պիտի տա ըստ օրերի կարգի. դրան հավելում է ***այսօր***-ը, որպեսզի հեռու մնանք անօգուտ հոգսերից ու ցավերից: Ինչպես որ մեկ այլ տեղում ասաց. «Վաղվա համար հոգ մի՛ արեք» (Մատթ. Զ 25), որովհետեւ անցավոր ու ժամանակավոր է մեր պանդխտության ժամանակը:

Այլեւ հացը, որ իջնում է երկնքից՝ Աստծուց, եւ կյանք է տալիս աշխարհին, թե՛ իմաստությունն է, որ Գիրքը «հրեշտակների հաց» է անվանում (Սաղմ. ՀԷ 25), եւ որով միշտ կերակրվում են հրեշտակները՝ ուսանելով Աստծուց, եւ թե՛ Աստծո Որդու մարմինը, որ նույնպես վայել է մաքուր հրեշտակներին, եւ որը, համաձայն Տիրոջ վկայության, եթե մեկը ուտի սրբությամբ, չի տեսնի հավիտենից մահը (տե՛ս Հովհ. Զ 51-52): Այս ամենը գիշեր-ցերեկ Աստծուց աղոթքով խնդրելու արժանի եղանք:



***«Թո՛ղ մեզ մեր պարտքերը, ինչպես եւ մենք ենք թողնում»:***

Ըստ բնության՝ բոլոր արարածները պարտական են ծառայելու Արարչին, գովելու եւ օրհնելու Նրան. այդ են պահանջում նաեւ մեծ Դավիթը (Սաղմ. ՃԾ 1-6) եւ քաջ նահատակները, որոնք հնոցի մեջ էին. նրանք այդ անել հրամայում են բոլոր արարածներին՝ երկնքին, լուսատուներին, ծովին, նրա մեջ գտնվող շնչավոր ու անշունչ բոլոր արարածներին: Իսկ հոգեւորները՝ իմանալիները՝ [հրեշտակները], եւ զգալիները՝ [մենք՝ մարդիկս], առավել ենք պարտական Աստծուն՝ մեզ մեծարելու, ամեն բան մեզ հնազանդվելու եւ մեր կարիքներին սպասավորելու համար տալու: Քանի որ ում շատ տրվեց, նրանից շատ է պահանջում Տվողը: Իսկ ի՞նչ կարող ենք ասել Աստծո [ամեն բան] գերազանցող մարդասիրության մասին. մեզ համար մարդացավ եւ մեռավ Անմահը. ի՞նչ վճար եւ հատուցում կտա դրան մարդը: Թեպետեւ Նրա համար մեռան, բայց մեռան՝ մահկանացու լինելով, իսկ Տերը, անմահ՝ հավիտենական լինելով, Իր մարմնով մեռավ՝ այն էլ Իրեն ատողների եւ թշնամի եղողների համար, նրանց համար, ովքեր պաշտեցին արարածներին եւ ո՛չ Արարչին:

Իսկ ո՞ր թիվը կարող է բովանդակել, կամ ո՞ր միտքը կարող է հիշել պարտքերը մեղքերի ու հանցանքների, որ յուրաքանչյուր ոք գործեց հոգով ու մարմնով, բոլոր զգայարաններով, որոնք կապարի պես ծանր բեռներ են անվանվում, խոր անդունդներ, հնդիկի սեւություն եւ ընձառյուծի խայտուց (տե՛ս Երեմ. ԺԳ 23), որոնք անփոխարկելի ու անլվանալի են, հավատացյալներս հայցում ենք հենց դրանց թողություն տալ եւ չհիշել դրանք, քանի որ. «Մարդու համար անհնարինը հնարավոր է Աստծուն» (Ղուկ. ԺԸ 27)՝ ըստ Նրա Աստվածության զորության եւ անճառելի մեծության, Նրա արարչական ողորմության ու հայրական գթասիրության, որոնք անեզր են ու անսահման: Ինչպես ասում է մարգարեի բերանով. «Եթե ձեր մեղքերը այծի մազի նման սեւ լինեն կամ թե որդան կարմիր, ձյան նման սպիտակ եւ բրդի նման մաքուր կդարձնեմ, եթե դադարեցնեք ձեր չարիքները եւ սովորեք բարիք գործել, այրիների ու որբերի հանդեպ արդարադատ լինեք, ողորմություն անեք» (տե՛ս Ես. Ա 17-19):

Եվ նախքան այս մեր աղերսանքի կաշառքը.

***«Թո՛ղ մեզ մեր մեղքերը, ինչպես որ մենք ենք թողնում մեր հանդեպ***

***մեղք գործածներին»:***

Աստծո սերն ու խնամածությունն այնքան մեծ են, որ Նա կամենում է, որ բոլորը ճանաչեն ճշմարտությունը: Իսկ ճշմարտությունը ճանաչելն այս է. բնավ չունենալ ատելություն եւ մախանք իրար հանդեպ եւ մտքում չպահել որեւէ մեկի մեղքերը: Ինչպես որ Տերը ծով գթությամբ ու ողորմածությամբ մեզ համար աղոթում էր Հորը՝ ասելով. «Որպեսզի մեկ լինեն, ինչպես որ Մենք Մեկ ենք» (Հովհ. ԺԷ 11), «Ինչպես որ Դու՝ Հա՛յր, Իմ մեջ, եւ Ես՝ Քո մեջ, որպեսզի նրանք մի լինեն» (տե՛ս Հովհ. ԺԷ 20): Այդ պատճառով էլ «*ինչպես որ*» ասելով՝ հարկադրում է, որպեսզի ամբողջ սրտով ու մտքով լինի թողությունը, ոչ թե կեղծավորությամբ, առաչոք: Թողնելու տերն ու դատավորը մենք ենք, իսկ Աստված հետեւում է մեզ:

***«Մի՛ տանիր մեզ փորձության, այլ փրկի՛ր չարից»*** դեպի հավիտենական կյանք: Փորձիչը սատանան է: Արդ, ինչպես որ Տերն է լույս կոչվում եւ անվանվում լուսավորություն, կյանք, կենդանություն, այդպես էլ սատանան՝ փորձիչ եւ փորձություն: Ուստիեւ խնդրում եւ աղաչում ենք փրկել, որ եթե [սատանան] Աստծուց խնդրի մեզ փորձել, ինչպես Հոբին, մեզ չտա նրա ձեռքը, որովհետեւ մենք Հոբի բազմատեսակ առաքինությունների զորությունը չունենք. նա արդար, աստվածապաշտ, ճշմարիտ, բոլոր տեսակի չարիքներից հեռացած վկայվեց Աստծուց: Այդ ամենը նրա համար զենք էին եւ համբերության պատճառ:

Այդ իմանալով՝ մեր Տերը հրամայեց մեզ ամեն ժամ աղոթել՝ փորձության մեջ չմտնելու համար [ոչ միայն] Հոբի փորձության տեսակով, որ ոչ միայն ինչքերի կորուստը, զավակների մահն ու մարմնի հիվանդությունն են, այլ փորձանքների բյուր ճանապարհներ կան, եւ բազում են չարի հնարանքները, երբ նա ճանապարհ է բացում շնանալու, սպանելու, գողանալու, հերձվածների մեջ ընկնելու համար, որ բոլորից առավել չար է, որովհետեւ մյուս մեղքերը մարդուն խոնարհեցնում, զղջման են բերում եւ մոտեցնում են Աստծուն, իսկ հերձվածողությունը հեռացնում է Աստծուց, աներկյուղ է դարձնում եւ զղջման չի բերում, նաեւ դարձնում է ամբարտավան, ինչպես Արիոսին, Մակեդոնին, Սամուստացուն, Նեստորին եւ մյուսներին: Դրա համար էլ ասում ենք.

***«Այլ փրկի՛ր չարից»***, որ նույն ինքը՝ փորձությունն է, որ նաեւ չար է կոչվում. ասում է *չարից*, որովհետեւ նա է, որ եղավ ե՛ւ իր, ե՛ւ այլոց չարիքի գտնողը:

***«Քանի որ Քոնն է արքայությունը եւ զորությունը եւ փառքը հավիտյանս. ամեն»:***

Խնդրվածքների ավարտին խոստովանություն է սա: Քանզի ասում ենք, թե մեղանչեցինք այն ամենի դեմ, ինչ ունես Քո բնությամբ, ինչ Քոնն է, թե թող գա Քո արքայությունը, որ անսկզբնաբար եւ հավիտյան ունես, եւ ունենալով՝ տաս մեզ: *Եվ զորությունը*, այսինքն՝ կարող ես թողնել մեր մեղքերը, եւ այն, ինչ խնդրում ենք, օտար չէ Քո բնությանը: Եվ քանի որ ոչ ոք չի կարող թողնել մեղքերը, այլ միայն Աստված, կարող է նաեւ անել, ինչ կամենում ենք, չտալ մեզ փորձության եւ հոգալ մեր բոլոր կարիքները: Հավիտյանս ունես նաեւ փառք, որով փառավորում ես Քեզ փառավորողներին հավիտենից, այլ ոչ թե առօրյա պատվով, որին թող արժանի դարձնի Եկեղեցու մանուկներին այժմ եւ հավիտյանս. ամեն:

*Գրաբարից փոխադրեց*
*Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ*

# ԿԱՄՔԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ

Յուրաքանչյուր անհատ իր կյանքի ընթացքում հասարակական երեւույթների հետ առնչվելիս անխուսափելիորեն ունենում է բազմատեսակ ու բազմաբնույթ հարաբերություններ եւ միաժամանակ ծավալում ակտիվ գործունեություն՝ իր առջեւ դնելով որոշակի ծրագրեր, նպատակներ, որոնց իրականացման համար պահանջվում է ցուցաբերել կամքի կայունություն, ճիշտ կողմնորոշվելու հատկություն:

Հանրահայտ ճշմարտություն է, որ անձնավորությունը ձեւավորվում է շրջապատող աշխարհի հետ իր ակտիվ փոխներգործությամբ, որի շնորհիվ կազմավորվում են անձի կամային եւ զգացական հատկությունները: Հետեւաբար մեր ամենօրյա գործունեության նպատակաուղղվածությունն է հզոր կամքով դիմակայել չար ուժերին:

Կամքը մարդկային բոլոր գործունեությունների անկյունաքարն է, եւ իզուր չէ, որ Շիլլերն այնքան դիպուկ ասել է. «Մարդկանց կամքն է, որ իրենց մեծ կամ փոքր է դարձնում»:

Մարդն իր ամբողջ կենսագործունեության ընթացքում պետք է աշխատի ձեւավորել իր սեփական կամքը, որպեսզի կարողանա այն հետագայում խելամտորեն դրսեւորել: Ինչպես ասել է քրիստոնյա ականավոր փիլիսոփա սբ Ավգուստինոսը. «Մարդու արժեքն իր կամքի մեջ է»: Կամքը նպատակասլաց գործունեության եւ այն գիտակցորեն կառավարելու՝ անձի ինքնահաստատման ներհոգեկան պայմանն է, որը հանդիսանում է նաեւ մարդու հոգեկան հասունության չափանիշ: Յուրաքանչյուր մարդ իր հոգեւոր իմացությամբ պետք է կարողանա բարձր կանգնել առօրյա չնչին մանրուքներից:

Անձի կայունացման գործում առանձնակի դեր է խաղում հոգեւոր պատրաստակամությունը: Այստեղ իր «Գալիքի տեսիլքով» գրքի «Անձնավորություն գաղափարի մասին» արժեքավոր ուսումնասիրության մեջ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը գրում է. «Բարոյական նկարագրի մի գլխավոր հատկանիշներն են՝ կամքի ուժ, դատողության հստակություն, զգացումի նրբություն եւ ոգեւորվելու կրակ: Կամքի ուժ ըսելով՝ չի հասկցվիր բնազդի կույր մղումը, այլ այն ուժը, որ ի գործ կդրվի հարկ եղած պահուն: Կամքի ուժ չունին ո՛չ համառները եւ ո՛չ այլ հախուռները, այլ անվախ եւ հարատեւ գործողները»:

Մեր օրերում մարդկությանը վնաս պատճառող հիվանդագին երեւույթներից մեկն է համարվում թուլակամությունը՝ աղբյուրը բոլոր չարիքների: Եթե մարդը կողմնակից է արդարության, ճշմարտության, ապա նա հեշտությամբ կկարողանա ձերբազատվել չարի լարող բոլոր որոգայթներից: Դրանում է կայանում քրիստոնեական պատրաստակամության գերագույն նպատակը՝ տեսնել հոգու եւ մարմնի ներդաշնակ զարգացումը: Մեզ համար մարմինը նույնքան սուրբ է, որքան հոգին: Մենք, իրավամբ, կդավանենք այն ճշմարտությունը, որ Արարիչը մարմինը մեզ տվել է՝ օժանդակելու հոգուն: Մենք ընդունում ենք այն ճշմարտությունը, որ մարդկային մարմինն Աստված Ինքը սրբագործել է Որդու մարդեղությամբ, եւ հավատում ենք նաեւ, որ մի օր մեր մարմինն էլ մասնակից պիտի լինի մեր հավիտենական փառքին:

Ինչպես հայտնի դարձավ մեզ, մարդու յուրաքանչյուր արարք հետապնդում է որոշակի նպատակ, այլ կերպ ասած՝ անձը նախօրոք գիտակցում է այն, ինչին որ ուզում է հասնել իր կյանքի ողջ գործունեության ընթացքում:

*Մուշեղ վրդ. ՍԱՐԳՍՅԱՆ*

# ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը Սբ Հարության տոնին հաջորդող Հինանց շրջանում նախաձեռնել էր ուխտագնացություններ դեպի Հայաստանի խոնարհված կամ չգործող վանքերն ու եկեղեցիները՝ մասնակցությամբ մի շարք տարածաշրջանների Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչների:

Ուխտագնացությունների ընթացքում ուսուցիչներն առիթ ունեցան տեղերում ծանոթանալու պատմամշակութային կենտրոններ հանդիսացող սրբավայրերի պատմությանը եւ միաժամանակ աղոթքով նորոգելու իրենց նվիրումի ուխտը:

Առաջին ուխտագնացությունը, որին մասնակցեցին Շիրակի մարզի ուսուցիչները, նշանավորվեց այցելությամբ դեպի պատմական Անի քաղաքի հայկական սահմանը: Ուսուցիչները հնարավորություն ունեցան ՀՀ սահմանից տեսնելու հազարաշեն Անիի Մայր տաճարը:

Այնուհետեւ ուխտավորներն այցելեցին Երերույքի տաճար, որտեղ մատուցվեց ուխտի ս. Պատարագ՝ ձեռամբ ՔԴԿ-ի տնօրեն Տ. Վարդան աբղ. Նավասարդյանի: Ս. Պատարագին մասնակցում էին նաեւ Հառիճավանքի վանահայր Տ. Կորյուն աբղ. Առաքելյանը եւ տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տ. Հուսիկ քհն. Գրիգորյանը:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125
## (1885-1920)

*Սկիզբը՝ թիվ 5-8*

Ցնորք աղջկա գոյությունն իսկ երջանկություն է նրա համար, նրա հեռավոր ներկայությունն իսկ կյանք է, որին իր ***«մութ կյանքի սեւերի»*** մեջ, ***«չար մենակության»*** բեռից անգամ կքված, նա միայն մի բան ունի ասելու. ***«Սրբազա՛ն երազ, կարոտալի՛ ժամ...»***:

Այսպես ծնվում է հոգու տանջանքը լուսավոր տոնի վերածվող «Իմ խաղաղ երեկոն է հիմա...» բանաստեղծությունը.

***Իմ խաղաղ երեկոն է հիմա***
***Մեղմալույս եւ տխուր եւ անուշ.***
***Քեզ երբեք սիրտըս չի մոռանա,***
***Իմ մաքո՛ւր, առաջին իմ անուրջ...***

***Տարիներ, տարիներ կըսահեն,***
***Կըմեռնեն երազները բոլոր -***
***Քո պատկերը անեղծ կըպահեմ***
***Օրերում անհաստատ ու մոլոր:***

***Եվ տանջանք, եւ բեկում, եւ թախիծ -***
***Սեւ օրեր ես դեռ շատ կըտեսնեմ.***
***Անունդ թող փարոս լինի ինձ***
***Սուտ կյանքի եւ դառը մահու դեմ...***

Ցնորք աղջիկը հեռու երկրում է, գուցե նաեւ չկա, գուցե բանաստեղծն է նրան ստեղծել իր անուրջների մեջ: Այդ աղջիկը ե՛ւ կա, ե՛ւ չկա, նա ամենուր է որպես ապրող ոգի, որպես տեսիլք. ***«Դու շրջում ես ամենուրեք, դու չըկաս, / Աներեւույթ դու խոսում ես աշխարհում...»***: Եթե անգամ նա իրական է, ապա անիրական է նրա ներգործության ուժը, որը հասնում է աստվածացման.

***Քո հեռու երկրի ուղին չըգիտեմ.-***
***Գուցե ես ինքըս ստեղծել եմ քեզ,***
***Աստվածացրել եմ, որ քեզ աղոթեմ,***
***Հրամայել եմ, որ վրաս իշխես:***

***Եվ քաղցր է լինել քո կամքի գերին,***
***Քո չարությունը բարիք համարել.-***
***Կրծքաբաց ելնել ընդդեմ քո սրին***
***Եվ այդ մահաբեր ձեռքը համբուրել...***

Նրանց հանդիպման պահը աննկատ է գալու. գալու է, երբ ցնորք աղջիկը փխատ ու միայնակ լինի, թաղած լինի տենչերը խորտակ: Ինքը կգա որպես մոռացված մի երգ՝ ***«Հյուսված աղոթքից, սիրուց ու ծաղկից»***: Ահա այդ ծաղկաբույլ բանաստեղծությամբ էլ Տերյանն ավարտում է «Մթնշաղի անուրջներ» շարքը՝ «Գարուն» բանաստեղծության կենսական ոգին արթնացնելով «Գարնանամուտի» մեջ:

«Գիշեր եւ հուշեր» շարքն ընդգրկում է 41 բանաստեղծություն, գրել է 1908-1911 թվականներին: Սկսվում է կյանքում տեղը գտնելու անորոշության դատապարտվածությամբ: Մուտքը հիշեցնում է Դանտե Ալիգերիի «Դժոխքը»: Այնպես, ինչպես մեծ իտալացին էր մոլորված մութ անտառում եւ ելքի ու փրկության ճանապարհ էր որոնում, նույն կերպ մոլորության է մատնվել կյանքում իր տեղը գտնել փորձող բանաստեղծը:

Նա հիշում է «Հեռու դղյակի քնքուշ թագուհուն», դյութական ժամանակն անցել է, եւ կորել է լուսե ուղին: Հաջորդում են աշնան պատկերները, եւ ակնհայտ է դառնում, որ այն, ինչը կար «Մթնշաղի անուրջների» մեջ, այստեղ այլեւս չկա, երազներն ու անուրջները դարձել են սոսկ հուշեր.

***...Սեւ խոհեր անսպառ, անհամա՛ր,***
***անհամա՛ր,***
***Սեւ գիշեր, եւ հուշեր, եւ հուշեր***
***ընդունայն,***
***Երազներ իմ անդարձ - ծաղիկներ իմ***
***գարնան.***
***Ի՛նչ կանչով ձեզ կանչեմ, ի՛նչպես լամ***
***ձեզ համար:***

Ավելանում են անձրեւի նման լացող դաշնամուրի երգը, ջութակի հեկեկանքը, որոնք արցունքներով են ողողում բանաստեղծի ուղին: ***«Որտե՞ղ որոնեմ երջանկության սուտ / Եվ ի՞նչպես գտնեմ վերադարձի լաց»***,- հռետորական հարցումով դիմում է բանաստեղծը: Խորանում են միայնության, հոգնածության զգացողությունները: Օրերի միալար տաղտուկի մեջ բանաստեղծը մշտապես նույնն է ասում. ***«Ես մի ճամփորդ եմ մթում մոլորված, / Ու հոգնած սիրտըս դարձել է խոնարհ...»***:

«Օտարուհին» բանաստեղծության մեջ բացահայտում է իրեն տառապանքի մատնած ցնորքի էությունը.

***Դառնություն է լցված ու թախիծ***
***Քեզ օտար պոետի երգերում.-***
***Ո՞ր կողմից եկար դու, որտեղի՞ց***
***Նետեցիր քո նետերն իմ հեռուն:***

***...Ճչում եմ՝ հեռացի՛ր, բայց արդեն***
***Քմծիծաղն է ծաղկում քո դեմքին.***
***Ո՞վ ես դու, որ անզոր եմ քո դեմ***
***Եվ գերի դիվային քո կամքին...***

Այս հոգետանջ վիճակների մեջ կան նաեւ սթափության պահեր, երբ բանաստեղծն ազատագրվում է երազներից ու անուրջներից («Կույր լինելու ցանկություն»).



***Ես գիտեմ հիմա.- ամենքի նըման***
***Մի սովորական աղջիկ էիր դու.***
***Ես էի պճնել փայլով դյութական***
***Գորշ պատկերը քո մտքի եւ հոգու...***

***Ես էի լցրել տխրությամբ սիրուն***
***Քո փոքրիկ սրտի դատարկը անգույն,***
***Լուսավառել իմ ըղձերի հեռուն***
***Չնչին օրերի մանրահոգ կյանքում...***

Սակայն այս իրականությունը կործանարար է, ավերվում է երազը, եւ բանաստեղծը երազում է կրկին կույր ու անգետ լինել, միայն թե ցնորքը չցնդի: Որովհետեւ հակառակ դեպքում մահը պիտի պարուրի նրան («Գիշեր է եւ լռություն...», «Մահ», «Հայրենիքում»): Ցնորքներից խաբված՝ նա նորից ցնորք է երազում, եւ այդ ցնորքը դարձյալ բախվում է իրականությանը՝ արյունոտելով նրա հոգին.

***Ինձ չես սիրում, ուրիշին,***
***Ուրիշին ես սիրում դու -***
***Եվ անզոր է ու չնչին***
***Քո դեմ տանջանքն իմ հոգու:***

Այս ցնորքը դառնում է անդարձություն՝ որպես բաժանում: Բայց աղջկա ներկայությունն անպակաս է, ցնորքին փոխարինում է հուշը: Անցյալի հիշողությունները դառնում են դավաճան հուշեր, սերը դառնում է ուշացած սեր, կրկնվում են աշնան եւ հուսահատության պատկերները («Աշնան»).

***Նորից անձրե՛ւ, մշո՛ւշ, ա՛մպ,***
***Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ,***
***Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշությամբ,***
***Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ...***

Ամեն ինչի մեջ հեկեկանք է, ցավ է, տանջանք է, հոգու մշուշը չի ցրվում, գիշերով մղկտում է քամին, հուշերը խեղդում են, աղջկա տեսիլքը էլ առաջվանը չէ, անրջային չէ, այլ նա երեւում է որպես մութ գիշերապահի լուռ այցելու: Օրերն ապականված են, կյանքի խնջույքը՝ անարգ, թախիծը՝ հիվանդ: Եվ անգամ կասկածանքն է տարածվում իր երգերի հանդեպ՝ ո՞ւմ համար են հնչում նրա սգավոր մեղեդիները («Իմ երգերին»): Եվ այսքանով հանդերձ՝ բանաստեղծն իր հոգում փրկության ուժ է գտնում եւ ելք որոնում գալիք օրվա մեջ, եւ այն էլ՝ «Թախիծ» վերնագրված բանաստեղծությամբ.

***Մահից չեմ վախենում, գալիքին***
***Նայում եմ հավատով,-***
***Կարոտ է սիրտըս քո հմայքին***
***Մաքուր ու հոգեթով...***

**«Ոսկի հեքիաթ»** շարքը գրել է 1908-1911 թվականներին՝ «Գիշեր եւ հուշերին» զուգահեռ: Ընդգրկում է 50 բանաստեղծություն: Շարքն ունի ռուս գրող Ֆեոդոր Տյուտչեւից բնաբան՝ ***«Եվ նո՛ր աշխարհը տեսա ես...»***, ինչը շատ կողմերով իմաստավորում է շարքի բովանդակությունը: Անուրջներից, գիշերվա հուշերից Տերյանը մտնում է հոգու լուսավոր աշխարհ:

Շարքը բացվում է մռայլ տրամադրությամբ, բայց լուսավոր մի հետագծով. ***«Եվ տառապանքիս գիշերներն անքուն / Իմ սրտին ընդմիշտ օտար թվացին...»***, այնուհետեւ՝ ***«Ինձ ահեղ թվաց խնդությունս նոր...»***: Իսկ վերջաբանը նոր կյանքի ավետիսն է.

***Ճիչ հանեցի ես սիրով լուսեղեն,***
***Աղաղակեցի օրհներգու ձայնով,***
***Սիրտըս նետեցիր քարին ու ջրին,***
***Խառնեցիր հոգիս աստղերի երգին,***
***Պարգեցիր կյանքս պարզ ու խնդագին***
***Հավիտենությա՛ն,***
***Հավիտենությա՛ն...***

Բանաստեղծն իրեն տեսնում է մի ուրիշ երկրում, մեկ ուրիշ հոգեւոր հայրենիքում, որը պատված է լուսազարդ շղարշով, ոսկի շողերով, եւ իր մասին այսպես է խոսում. ***«Եվ ես հավիտյան ուրիշ եմ արդեն»***: Հիշենք, որ «Անդարձություն» (***«Մենք բաժանված ենք...»***) բանաստեղծությունը եւս ավարտվում էր համանման տողերով. ***«Եթե տեսնեմ քեզ վերադառնալիս,- / Քեզ ի՛նչպես կանչեմ.- ես այն չե՛մ, այն չե՛մ...»***: Սա կերպարանափոխություն չէ, այլ ինքնարոնում կյանքի կեռմաններին: Այս շարքում Տերյանը կյանքի լուսավոր շավիղի վրա է եւ մահվան աշխարհից գալիս է դեպի կյանք: Գիշերին փոխարինում է արշալույսը, մութին՝ վառվող հուրը, աղջկա հայացքը դառնում է ոսկի ու ոսկեցոլուն, ոսկեհուր, ժպիտը՝ արեւոտ, երեկոն՝ գարնանային ու կապույտ, գիշերամուտը՝ ոսկեշղթա, վիշտը՝ պայծառ, մշուշը՝ ոսկեպայծառ:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԴԱՎԻԹ Դ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ
## (1590-1629?)

*Սկիզբը՝ էջ 3*

Հազիվ թե կարելի է կասկածել նամակների շողոքորթ լեզվին, սակայն պապից նպաստ ստանալ չհաջողվեց: Ուստի նա որոշում է կաթողիկոսության հետ պարտքն էլ փոխանցել մեկ ուրիշի: Կամ էլ նա մտածում էր փախչել Օսմանյան կայսրություն եւ այնտեղ վարել կաթողիկոսությունը: Այդ առնչությամբ նա կանգ է առնում Մովսես վարդապետի վրա՝ հույս ունենալով նրանից կանխիկ դրամ էլ ստանալ: Ժամանակին Պողոս Մոկացին եւ Մովսեսը գործել էին միասին եւ քարոզել՝ շրջագայելով երկրով մեկ: 1618 թվին, երբ Մելքիսեդեկը թագավորական հրովարտակով եւ 100 թուման տուրքի պայմանով կաթողիկոս դարձավ, նա Պողոս Մոկացու դեմ բռնություններ գործեց, սակայն բռնությունները Մովսես Տաթեւացու դեմ չկարողացան վերջինիս դուրս քշել իր վիճակից, քանի որ նա Սյունիքից էր, որը ենթակա էր Մայր Աթոռին՝ ի տարբերություն Մոկացու, որն Աղթամարի վիճակից էր: Ավելին. Մովսեսը նրան ուղարկեց իր փիլոնը, գավազանը եւ գորգը՝ ասելով. «Եթե մեր քարոզելը մեղք է, ապա դադարում ենք քարոզել, սակայն Աստծուն դու պատասխան կտաս»: Մելքիսեդեկի պես կեղտն անգամ դրանից ամաչեց եւ գավազանն ու մյուս իրերը ետ ուղարկեց՝ արտոնելով քարոզել: Դա եղավ 1620-ին, երբ Պողոս Մոկացին ստիպված էր եղել քաշվել Մեծ անապատ: Թույլ տալով Մովսեսին քարոզել՝ Մելքիսեդեկը, այնուամենայնիվ, շարունակեց իր նենգություններն ու գրպարտություններն այն աստիճանի, որ Մովսեսը մտածում էր հեռանալ Կարին, որպեսզի կարողանա իր հոգեւոր առաքելությունը կատարել: Նա գալիս է Երեւան, ընդունվում Ամիրգունա խանի կողմից, որը համոզվում է, որ իր կարծիքը Մովսեսի եւ Պողոսի մասին ճիշտ է, որ նրանք քաղաքական խնդիրներ չեն հետապնդում եւ զբաղվում են քարոզչությամբ: Մովսեսի եւ Ամիրգունայի միջեւ հարաբերություններն ավելի ջերմացան, երբ նա պարսից խանի քենուն՝ Ագապիին, հաշտեցրեց իր ամուսնու՝ երեւանցի Հովհաննեսի հետ, ինչը չէր կարողացել անել ինքը՝ Ամիրգունան: Դրա վրա հիանալով՝ Ամիրգունան Մովսեսին հանձնեց Երեւանի Ս. Անանիայի եկեղեցին, որը նա պայծառացրեց՝ դարձնելով ազգի համար նվիրական սրբավայր: Մովսեսն այստեղ մնաց մինչեւ 1623 թիվը: Ս. Անանիայի եկեղեցու համբավը տարածվեց երկրով մեկ, անգամ՝ Վրաստանում, Քրդստանում եւ Պարսկաստանում: Մովսեսին նվերներ էին բերում, ինչը շարժում էր Մելքիսեդեկի զայրույթը, բայց Ամիրգունայի ահից վախենում էր ինչ-ինչ քայլեր ձեռնարկել: Նա մտածում էր օգտագործել Մովսեսի անունը. նրա հետ կատարել մեռոնօրհնեք եւ գանձել հասույթը: Նա այդ նպատակով մարդիկ ուղարկեց Մովսեսի մոտ, սակայն Մովսեսը հրաժարվեց՝ ասելով, որ ինքը նույնիսկ եպիսկոպոս չէ: Մելքիսեդեկը 1623 թ. ապրիլի 7-ին Ս. Անանիայի եկեղեցում նրան եպիսկոպոս ձեռնադրեց, եւ երկուսով ապրիլի 10-ին կատարեցին մեռոնօրհնեքը: Հավաքված գումարը, իհարկե, յուրացրեց Մելքիսեդեկը: Ջուղայեցի առեւտրականները, վերադառնալով Սպահան, խիստ գովաբանեցին Մովսեսին, որ շատերն ուզեցան եւ փափագեցին գոնե մեկ անգամ նրան տեսնել: Նրան հրավիրեցին Սպահան, որտեղ, նաեւ նրա շրջակայքում, նա այցելեց բռնագաղթվածներին ու քարոզեց: Հետո նա մեծ փառքով վերադարձավ Երեւան: Դեռ մեռոնօրհնեքի ժամանակ եւ Սպահան գնալու ընթացքում Մելքիսեդեկը մտածում էր կաթողիկոսությունը փոխանցել Մովսեսին: Նա նրան հայտարարեց, որ ազգն իրենից երես է թեքել եւ հակառակը՝ սիրում եւ ընդունում է նրան: Ուստի առաջարկում է նրան դառնալ կաթողիկոս, վճարել պարտքերը եւ իրեն էլ ապրելու միջոցներ տալ: Մովսեսը, որ միշտ նրանից նենգություններ էր տեսել, կասկածով վերաբերվեց նրա առաջարկությանը եւ կտրուկ հրաժարվեց: Հավանաբար դա եղավ 1623-ի վերջերին եւ 1624-ի սկզբներին:



*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

Կից անկյունում

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԶՐՈՒՑԱՇԱՐ

## ԸՆՏԱՆԻՔ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գր. Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ



**- Տե՛ր հայր, վերջերս շատ է խոսվում այն մասին, որ հայ ընտանիքներում նոր տնտեսական հարաբերությունների հետեւանքով խարխլվել են հոր դերն ու հեղինակությունը, եւ դրանց վերականգնման խնդիր կա: Մի բան, որ բացասական ազդեցություն է թողնում երեխաների դաստիարակության վրա: Իսկապե՞ս կա այդ խնդիրը:**

- Կարծում եմ՝ ընտանիքի հոր դերի վերականգնումը պետք է ուղեկցվի նախ եւ առաջ նրա՝ իբրեւ հայր որակական բարձրացմամբ: Այլապես, եթե դերը բարձրանա, բայց անձնավորության որակը չբարձրանա, մի ուրիշ տեսակի աղետ պիտի ծնվի: Հարցի ենթատեքստում ակնհայտ է այն պատճառաբանությունը, թե ընտանիքի հայրը միջոցներ չունի զավակներին դաստիարակելու: Մեղմ ասած՝ սա այնքան էլ ճիշտ ձեւակերպում չէ: Դաստիարակությունը ոչ միայն նյութական, այլ ավելի շուտ բարոյական ու հոգեբանական հանգամանքներով է պայմանավորված: Նյութական սահմանափակ հնարավորությունը երբեւէ չի կարող լուրջ պատճառ հանդիսանալ ճիշտ դաստիարակության խաթարման, քանի որ դաստիարակությունն առաջին հերթին հոգեւոր ու գաղափարական երեւույթ է: Սրտի փափագ, ծնողական կեցվածք, ընտանեկան առողջ մթնոլորտ, սեր, ջերմություն, հոգեւոր հասունություն, աստվածպաշտություն, ճշմարտության գիտակցություն. այսքանը լիովին բավարար է զավակներին ճիշտ դաստիարակություն տալու համար: Եվ այս ամենը ոչ մի կապ չունի նյութականի հետ: Այսպիսի մթնոլորտի առկայության պարագայում անգամ փողոցից ու հեռուստացույցի էկրանից երեխայի ստացած վատը, անցանկալին այնքան էլ վտանգավոր չեն, քանի որ դրանք անպայման անցնում են ընտանեկան բարեշունչ քուրայով, զտվում ու սրբագրվում:

**- Հնում բարեպաշտ ընտանիքներում երեխաներն իրենց հոգեմտավոր կրթությունն սկսում էին Սուրբ Գրքի ուսումնասիրությունից: Մեր օրերում շատ ծնողներ բացարձակ ուշադրություն չեն դարձնում դրան, ուղղակի անտեսում են հոգեւոր դաստիարակության որեւէ դրսեւորում՝ դրա փոխարեն առավել կարեւորելով երկրորդական բաները: Ինչո՞վ եւ ինչպե՞ս է հնարավոր լրացնել այդ բացը:**

- Անշուշտ, դա մեծագույն չարիք է թե՛ տվյալ ընտանիքի, թե՛ հասարակության համար: Հոգեւոր դաստիրակությունից զավակներին հեռու պահելով՝ արդյունքում ծնողն այնպիսի ապականված վարք է ստանում, որի ձեռքը կրակն է ընկնում: Եթե չկա հոգեւորը, տեղը դատարկ չի մնալու, ուրիշ բանով է լցվելու: Այլ հարց է՝ ինչով: Սրտի մեծ ցավ եմ ապրում ամեն անգամ, երբ երեխան, որ գալիս էր եկեղեցի, շապիկ էր հագնում, մասնակցում էր սուրբ Պատարագին, ու մի օր էլ տեսնում ես՝ չկա: Շատ լավ գիտեմ պատճառը. թերեւս մեկը քմծիծաղ է տվել, եւ դա առիթ է եղել, որ երեխան կտրվի եկեղեցուց: Եկեղեցուց կտրվելով՝ ո՞ւր պիտի հայտնվի: Տանը չի նստելու, ո՞ւր պիտի գնա. հիմնականում՝ փողոց... Արդյունքում երեխան իր կարողությունները պիտի ծախսի անարժան «գործերի» վրա: Ժամանակները «մեղք չունեն», որովհետեւ այսօր էլ կան շատ ընտանիքներ, որտեղ երեխաներն իրենց կյանքն սկսում են հենց Սուրբ Գրքի ընթերցանությամբ, եւ իրենց սովորած առաջին «ոտանավորը», թերեւս, «Հայր մեր»-ն է լինում:

**- Տե՛ր հայր, նույնիսկ ամենաօրինակելի եւ բարեպաշտ ընտանիքներում միշտ չէ, որ հարթ ու ներդաշնակ են փոխհարաբերությունները: Ինչպե՞ս անել, որ ընտանիքի անդամներից որեւէ մեկի ազատությունը, հետաքրքրությունները չհակադրվեն մյուսներին:**

- Վեճ ու անհամաձայնություն այս կամ այն չափով լինում են ցանկացած ընտանիքում, որովհետեւ ընտանիքը հասարակության այն ամենասեղմ օղակն է, որտեղ մարդիկ անընդհատ շփվում են միմյանց հետ, շատ լավ գիտեն միմյանց լավ ու վատ կողմերը... Գիտե՞ք՝ շատ բան պետք չէ. ընդամենը պետք է զիջող լինել, փորձել հասկանալ ու հանդուրժել դիմացինին, իր արյունակցի, իր մերձավորի բարին կամենալ, ինչը, ցավոք, շատ քչերին է հաջողվում: Նայե՛ք «02» ծրագիրը: Հանցագործ-զոհ հարաբերություններում իրար անծանոթ մարդիկ գրեթե չեք տեսնի. կա՛մ վաղեմի ընկերներ են, կա՛մ հայր ու որդի, կա՛մ մարդ ու կին, կա՛մ քույր ու եղբայր... Այսինքն՝ թշնամության ամենախորշելի դրսեւորումները, եւ դրանց մղող մոլորություններն առավելապես հենց մտերմիկ շրջանակներում են լինում: Երբ Քրիստոսն ասաց. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին եւ աղոթե՛ք նրանց համար...» (Մատթ. Ե 44), մեր Տերը շատ լավ գիտեր, որ քո չճանաչած մարդը երբեք չի կարող քեզ ոխերիմ թշնամի լինել, բայց միայն՝ մտերիմը, հարազատը: Եվ, ուրեմն, ապտակին ապտակով չպատասխանելը, չարիքին բարիքով հատուցելը խաղաղության ամենահաստատուն երաշխիքն են, որոնք իրականանում են հենց կատարյալ քրիստոնյայի կեցվածքի շնորհիվ: Եվ սա ասված է առաջին հերթին հարազատների համար:

**- Հաճախ ընտանեկան վաճերի ու տարաձայնությունների առիթ կարող են դառնալ զանազան նեղությունները՝ սոցիալական պայմաններ, բնակարանային անհարմարություններ եւ այլն: Ասենք՝ շատ ծնողներ ստիպված են լինում երեխային բացատրել, որ փող չունենալու պատճառով չեն կարող նրան համապատասխան կրթություն տալ: Երեխան կարող է հաշտվել, բայց կարող է նաեւ չհաշտվել ծնողների աղքատ լինելու հանգամանքի հետ: Իսկ անհաշտությունը ծնում է բազում անախորժ բաներ: Արդյո՞ք սոցիալական բարվոք պայմանները որոշիչ դեր ունեն ընտանեկան հաշտ ու խաղաղ մթնոլորտ ձեւավորելու համար:**

- Կարծում եմ՝ ո՛չ: Համենայն դեպս՝ ո՛չ որոշիչ: Քի՞չ կան կենսական բոլոր պայմաններով ապահովված ընտանիքներ, ուր «իրար միս են ուտում». մարդիկ ամեն բան ունեն, բայց չգիտես, թե էլի ինչ են ուզում: Զուտ հոգեբանական այս բարդույթը կարող է լուծել միայն հավատքը, որովհետեւ հավատքը մարդու հայացքը նյութից վեր է բարձրացնում:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-125

## (1885-1920)

*Սկիզբը՝ էջ 5*

Այդ սերը գալիս է սպիտակ շորերով, գալիս է որպես գարնան լուսե ամպ, նրա վրա տարածում է ***«արբեցնող շարմանդաղ»***, հասկանում է նրա տրտմությունը, եւ բանաստեղծը ոգեւորված ասում է. ***«Մենք առհավետ շղթայված ենք մեկ-մեկու... Իմ սեւ երկրում ժպտացիր դու լուսավառ...»***: Այս ամենը նրա եղերերգերը վերածում են օրհնության, եւ բանաստեղծը բացականչում է. ***«Օրհնությո՛ւն քեզ, կյա՛նք, անուշ է անհուն...»***: Այդ օրհնությունը շռայլորեն նա ընծայում է ցնորք աղջկան՝ ***«Սերը ցնորք է, / Բախտը՝ երազ... / Իմ սիրո լույսն էր / Պատկերըդ վառ... / Կարոտիս երգն էր / Պայծառ հոգիդ... / Կյանքը հեքիաթ է, / Աշխարհը՝ սո՛ւտ...»***:

Տառապանքի աշխարհից եկող մարգարեի նման Տերյանը հռչակում է իր կյանքի կարգախոսը, ինչը եւ նրա պոեզիայի բանաձեւն է.

***Ես տառապանքս բախտ եմ համարում***
***Ու ծիծաղում եմ ձեր բախտի վրա...***

Տերյանն ասես արբած է ***«կյանքի անուշ գաղտնիքով»***, ինչը վերածվում է հանդիսանքի («Երկու ուրվական»).

***Ես եմ, դու ես, ես ու դու***
***Գիշերում այս դյութական,***
***Մենք մենակ ենք,- ես ու դու,***
***Ես էլ դու եմ՝ ես չըկամ...***

Անգամ մահն է դառնում «Մահ-ցնորք»՝ որպես լուսավոր կյանքի անուրջ: Անանուն աղջկան նետված խոսքն այս սկիզբն ունի. ***«Դու անուն չունես, քեզ ի՞նչպես կանչեմ, / Եվ ուղի չըկա երկիրըդ գալու...»***: Ու թեեւ ասում է, որ ինքը ոչ հմայական աղոթք գիտի եւ ոչ դյութիչ նվագներ, որ գրավի նրան, բայց հենց այդ խոսքի ուժով շարունակվում է.

***Հայտնվիր անհուն փայլով ու փառքով,***
***Ժըպիտըդ փոքր իմ երկրի մթում.***
***Տանջիր ինձ վերջին քաղցր տանջանքով,***
***Քեզ գո՛վք, քեզ օրհնե՛ք, քեզ փա՛ռք***
***անհատնում...***

Մահն այս դեպքում կյանքի տոնահանդեսի մեջ սոսկ ***«անուշ տխրություն»*** է, իսկ մենությունը՝ լուսեղեն: Եվ խայտում է բանաստեղծի հոգին, ցավն անգամ դարձնում տոնական կենսակերպ.

***Ես գիտեմ լուսեղեն մի երկիր,***
***Ես գիտեմ դյութական մի հովիտ,***
***Ուր հոգին թափում է վշտակիր***
***Իր թեւերն ու հագնում է ժըպիտ:***

***Ես գիտեմ մի թովիչ առասպել,***
***Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում.***
***- Քո անուշ անունով միշտ արբել,***
***Եվ երգով, որ բնավ չի մեռնում:***

Հրաշք է դառնում կյանքը, որովհետեւ վերածվում է խորհրդավոր սիրո՝ հարություն է առնում մեռած հարսնացուն եւ բանաստեղծի հետ երգում կյանքի երգը: Այդ երգը դառնում է հավերժության երգ եւ վերածվում կյանքի, վերածվում կյանքի շրջապտույտի: Ստեղծվում է «Կարուսել» բանաստեղծությունը իր իմաստուն երգով ու կրկներգով.

***... Եվ այն վալսը - «Անդարձ ժամանակ»,***
***Ծառուղին ամայի պուրակում,***
***Եվ գիշեր, եւ համբույր, եւ լուսնյակ...***
***Տաղտկալի՛, ձանձրալի՛ պատմություն...***

***Պտտվիր, պտտվիր, կարուսել,***
***Ես քո երգը վաղուց եմ լսել...***

***Պարում են խելագար խնջույքում,***
***- Ով կուզէ՝ թող գաղտնիքն իմանա,-***
***Ոչ վերջ կա, ոչ ըսկիզբ այս երգում,-***
***Երեկ ես, այսօր դու, վաղը նա...***



***Պտտվիր, պտտվիր կարուսել,***
***Ես քո երգը վաղուց եմ լսել...***

Այս մշտանորոգ ու մշտունայն կյանքում հոգու խորությունն ու տառապանքի վեհությունն անհասկանալի են: Ուստի, ընդդեմ անհատի խորագույն տառապանքի, կյանքի ամենօրյա թեթեւ ընթացքն իր օրենքն է թելադրում: Պտտվում է կյանքը, պտտվում է կարուսելը, պտտվում են տարվա եղանակները: Աշնանային տխուր գույներին ավելանում են գարնանային բնանկարներն ու ապրումները՝ որպես աշնանային տրամադրությունների վերափոխություն՝ «Գարնան երեկո», «Գարնան լուսե ամպի նման...», «Գարնան քաղաքում», «Հայտնություն»: Եվ ամենեւին պատահական չէ, որ շարքն ավարտվում է հպարտ ու վերձիգ «Արեւածագ» բանաստեղծությամբ.

***Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,***
***Բա՛րձր, բա՛րձր, - հեռավոր ու մենավոր.***

***Այնտեղ, ցածում, դեռ նիրհում են***
***դաշտ ու ձոր,***
***Դեռ խավար է այնտեղ դաժան ու լռին...***

Հոգու արթնացման ձայնն է սա, որ, որպես կանչ, հեղինակը նետում է երկրային մութ ուղիներում տառապող իր եղբայրներին:

Այս տրամադրությունների անմիջական շարունակությունն է «Վերադարձը», որը ոչ թե առանձին շարք է, այլ ինքնուրույն բանաստեղծություն՝ կազմված երկու մասից, որով ամփոփում է նախորդ երեք շարքերի ներքին հոգեբանական զարգացումը: Մենության ու տանջանքի տառապագին ցավից ազատագրող բանաստեղծի ոգին այստեղ ազդարարում է իր հաղթանակը.

***Մենության խավար զնդանից կրկին***
***Ես վերադարձա հզոր ու հպարտ,***
***Եվ ինձ ողջունեց աղմուկը զվարթ***
***Ու նոր խնդությամբ այրեց իմ հոգին...***

Բազմաղաղակ օրերի լեզուն, այսինքն՝ կենդանի կյանքի տարերքը նրա համար հնչում է ***«որպես մարտակոչ»***՝ ***«Եվ սարսափելին թվում է դյութող»***: Տերյանն իրեն տեսնում է կյանքի տարերքի ու պայքարի մեջ, այն ուժերի շաջապատում, որոնք կոչված են փոխելու կյանքի հունը:

Ահա այս կառուցվածքով եւ այս հաջորդականությամբ տրամաբանական ավարտի են հասնում մեկը մյուսի հետ սերտորեն կապված, ներքին զարգացմամբ մեկը մյուսի շարունակությունը հանդիսացող «Մթնշաղի անուրջներ», «Գիշեր եւ հուշեր», «Ոսկի հեքիաթ» բանաստեղծական շարքերը:

Տերյանի հետագա շարքերը՝ «Ոսկե շղթա», «Կատվի դրախտ» եւ «Երկիր Նաիրի» պայմանական են, որովհետեւ չհասցրեց դրանք վերջնականապես մշակել եւ զետեղել իր նախատեսած «Բանաստեղծություններ» գրքի երկրորդ հատորի մեջ:

*Շարունակելի*

*Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿՅԱՆՔ՝ ԹՌԻՉՔԻ ՊԱՀԻՆ...

## Վարոս Շահմուրադյան - 70



Եթե անսպասելի չընդհատվեր 60-ականների երկրորդ կեսին գեղարվեստական ասպարեզ մուտք գործած նկարիչ Վարոս Շահմուրադյանի կյանքը, նա այսօր 70 տարեկան կլիներ, կլիներ Ազգային պատկերասրահում կազմակերպվող իր անհատական ցուցահանդեսի ցանկալի հոբելյարը, իսկ մեզ էլ բախտ կվիճակվեր տեսնելու նրա՝ կյանք առած շատ ու շատ մտահղացումներ, որոնք, ցավոք, մնացին անավարտ: Նրա անսպասելի եւ առեղծվածային մահից հետո, երբ մոր՝ տիկին Նվարդի հետ առաջին անգամ մտա արվեստանոց, ապշեցի. զարմանալի զուգադիպությամբ նկարակալի վրա մնացել էր նրա վերջին գործերից մեկը՝ «Ալբատրոսը»: Կարելի է կարծել, թե Վարոսը դեռեւս ցանկություն է ունեցել նկարի վրա աշխատելու, թեպետ այս գործն իր իմաստային բովանդակությամբ ու կատարողական արվեստով միանգամայն ավարտուն գործ է եւ զարմանալի գեղեցիկ, որքան էլ որ թեման ողբերգական է: Տեղ-տեղ կապույտ ծվեններով խաղաղաշունչ երկնի ֆոնի վրա պատկերված է ներքեւ գահավիժող՝ վզից զարկված թռչունը, որը լուծված է հենց երկնքի գունե-րանգներով. ասես երկնքից պոկված մի կտոր լինի, եւ ընդհանուր ֆոնից միակ առանձնացողը արնագույնն է, որ ծորում է թռչնի պարանոցից: Սա կանխազգացության պես մի բան էր եւ չափազանց նման նկարչի ճակատագրային վախճանին. ընդհատված կյանք՝ թռիչքի պահին...

Ով գիտեր ու ճանաչում էր նաեւ Վարոս մարդուն, չէր կարող նրա ամբողջական կերպարը չկրել իր հոգում: Նա ճշմարիտ քրիստոնյայի օրինակ էր՝ բառի ամենալայն իմաստով: Մարդկային հարաբերություններում անչափ նրբանկատ էր ու զգայուն, ազնիվ էր ու բարի, հեզաբարո ու առաքինի, գիտեր խորապես կարեկցել ու օգնել՝ հաճախ զրկելով իրեն, եւ այդ ամենն այնպես էր դրսեւորում, որ դիմացինը չնկատի, չհամակվի հանկարծ փոխհատուցման զգացումով: Ցավոք, նրա տեսակը շատ է պակասում մեզանում:

Սակայն, երբ այսօր կրկին դիտում ենք նրա գործերը, հասկանում ենք, որ մարդկային կյանքի տեւողությունը նրա ապրած տարիներով չի սահմանափակվում, այլ այն մտավոր ու հոգեւոր արժեքներով, որ իր հետ



աշխարհին է բերում մարդու այն տեսակը, որն օժտված է հիրավի արարչագործ ոգով: Վարոսի ոգին հենց այդպիսին էր, եւ այն մշտապես թեւածում է մեզանում՝ իր կտավներից, եւ համոզված ենք, որ այդ ոգին երկար, շատ երկար թռիչքներ ունի կատարելու:

Վարոսն ապրեց ընդամենը 37 տարի: Եթե այդ տարիներից հանենք նրա մանկության ու ուսումնառության տարիները, ապա մնացածը կարելի էր համարել որպես որոնման, սեփական ձեռագիրն ու ոճը պեղելու տարիներ: Սակայն նրա գործերը՝ ե՛ւ որակով ե՛ւ քանակով խոսում են միայն այն մասին, որ գործ ունենք միանգամայն հասուն, ամուր ձեռագիր ու հաստատուն աշխարհընկալում ունեցող մի սքանչելի, տաղանդաշատ նկարչի հետ, առանց որի մի կարեւոր ու անփոխարինելի տեղ թափուր պիտի մնար ժամանակակից հայ կերպարվեստում:

Վարոս Շահմուրադյանի գործերը առաջին հայացքից դիտողին գերում են իրենց ռոմանտիկ, քնարական շեշտադրումներով, բանաստեղծական տող ու շնչին բնորոշ հուզականությամբ: Սակայն խորքում նա առավելապես խոհափիլիսոփայական խորքայնություն ունեցող նկարիչ է, ով շատ հաճախ իր ասելիքը «համեմում» է նաեւ խորհրդանիշների լեզվով: Պլաստիկական ձեւերի ներդաշնակ անցումներով կուռ կառուցվածքներ ստեղծելու նկարչի հմտությունը, ընտրված թեմայի, նյութի խոր իմացությունն ու զգացողությունը, դասական ու արդիական ձեւամտածողության նուրբ համադրումները կտավի մակերեսին ստեղծում են ծանոթ ու անծանոթ, այլաբանական ու խորհրդավոր մի աշխարհ, ուր լույսը որպես արարման սկիզբ է մուտք գործում կտավի մակերեսին, ողողում ողջ կոմպոզիցիան, մաքրումզտում գույնն ու գունաթույրը՝ ստեղծելով խորք ու խորություն, հարթություն ու ծավալ, պլանների հերթագայություն ու հեռանկար: Այդ առումով չափազանց հետաքրքիր ու ինքնատիպ լուծումներ ունի նկարչի պատուհանների շարքը: Դրանցում գունային թափանցիկ ու նուրբ անցումների համադրումները, որոնք զուգորդված են խորհրդանշական ձեւերի սքանչելի ներդաշնակումներով, նրա հորինվածքներին հաղորդում են գեղանկարչական մի այնպիսի որակ, ուր քնարականությունն ու էպիկականը ռոմանտիկայի հետ միասնաբար բացահայտում են ներքին այն ռիթմաշարը, որը հյուսում, իրար է շաղկապում նկարչի տեսիլքն ու երեւակայությունը, օբյեկտիվ իրականության ու առկա միջավայրից ստացած անմիջական տպավորությունը: Վարոսի բոլոր գործերը՝ անկախ թեմաներից ու կատարողական ոճերից, տոգորված են ինչ-որ հեռավոր, որոշ դեպքերում նաեւ մերձավոր ու խիստ առարկայական թախծաշերտերով, որոնք ասես թաքնված են իրերի ու առարկաների, մարդկային ֆիգուրների, անկանոն ու երկրաչափական ձեւերի ու նաեւ գունաթույրերի մեջ: Այդ զգացողությունն այն բանալին էր, որով նկարիչը փորձում էր բացահայտել մոլորակի վրա ապրող մարդու կյանքի ու մահվան հավերժագնա խորհուրդը, նրա երկփեղկվածությունը եւ դրանց ներքին ու արտաքին ձեւերի դրսեւորումներն ու ներգործությունները մարդ-բնություն փոխհարաբերություններում: «Ռեքվիեմ», «Անմահություն», «Ալբատրոսը», «Նկարով աղջիկը» գործերում մարմնականի, նյութի վախճանը սկիզբ է դնում գոյության մեկ այլ ձեւի՝ հոգու եւ հոգեւորի սկզբին՝ անմահությանը, հավերժությանը: Հավատանք մենք դրան թե ոչ՝ մեկ է՝ Վարոսը ապրում եւ արարում էր հենց այդ փիլիսոփայությամբ, յուրաքանչյուր օրվա մեջ երեկն ու վաղը տեսնելու եւ այն կտավի վրա ամրագրելու մտայնությամբ:





Աթեիստական գաղափարախոսության մթնոլորտում կրթված ու դաստիարակված Վարոս նկարչի համար տիեզերականը երբեք չդարձավ սոսկ գիտական հայտնագործումների դասագիրք, չդարձավ սոսկ մարդկային մտքի ժառանգությունը հասկանալու ու այն գնահատելու միջոց: Տիեզերականի խորհուրդն ու խորքը նկարչին մղեցին հասկանալի ու անհասկանալի խորհրդածությունների, մարմնավորն ու հոգեւորը միասնականության մեջ տեսնելու հաստատուն կեցվածքի:

*Շարունակությունը՝ էջ 8*

**Հայր Անատոլի Բերեստով**
**Բժշկական գիտ. դոկտոր**

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

*Սկիզբը՝ 2009 թ. թիվ 13-16*

Զրույց երրորդ

**- Մի՞թե բժիշկը պետք է միշտ օգնի իր հիվանդ ախոյանին ու հայրենիքի թշնամիներին, եւ արդյո՞ք բարոյական է օգնել մահվան դատապարտված հիվանդներին: Հնարավոր է անհուսալի հիվանդներին ցուցաբերած մեր օգնությունը խորացնի նրանց տառապանքներն ու տանջանքները: Մի՞թե ավելի լավ չէ արագացնել նրանց տառապանքների ավարտը: Գուցե հենց դրանում է մեր օգնությունը:**

- Այո՛, օգնել պետք է բոլորին: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն ասաց. «Առողջները չեն բժշկի կարիք ունենում, այլ հիվանդները»: Եվ ապա՝ «Որ քաղաքը, որ մտնեք, եւ ձեզ ընդունեն... բժշկեցեք դրանց մեջ եղած հիվանդներին» (Ղուկ. Ժ 8-9): Նա չասաց, թե բժշկեք այսինչին, իսկ այնինչին՝ ո՛չ: Բոլոր նրանց, ովքեր բժշկի կարիք ունեն, պետք է բժշկել: Յուրաքանչյուր մարդ իր մեջ կրում է Աստծո պատկերը, ինչը պետք է հարգել ու սիրել, իսկ եթե մարդը տառապում է, նրան պետք է օգնել: Եվ որքան սաստիկ է տառապում հիվանդը, այնքան շատ կարիք ունի օգնության:

Բժշկի, առավել եւս հավատք ունեցող բժշկի համար յուրաքանչյուր մարդ, ով էլ որ նա լինի, իր մեջ կրում է Աստծո պատկերը: Ինչպես կարող է հավատացյալ մարդը, առավել եւս բժիշկը, մերժի օգնել տառապող հիվանդին:

Քրիստոնյա Ռուսաստանում բուժական գործը մշտապես աղերսվել է առ Աստված հավատքի եւ Նրան ծառայելու հետ: Հիշենք, որ բժշկական մշակույթը Ռուսաստանում սկզբնավորվել է հավատքի կենտրոններից՝ վանքերից: Դեռեւս 1091 թվականին Պերեսլավի եպիսկոպոս Եֆրեմն իր ենթակայության տակ գտնվող վանքերին հրահանգում է կառուցել «բաղնիքներ, բուժարաններ եւ հիվանդանոցներ **բոլոր երթեւեկների** (շեշտադրումը՝ հեղինակի) համար եւ նրանց **բժշկել անվճար**» (Հայոց Եկեղեցին այս խնդիրները լուծել էր դեռեւս Ներսես Մեծի օրոք՝ 4-րդ դարում - թարգմ.):

Տարեգրությունից բերված այս հատվածում աչքի է զարնում մեր օրերի համար երկու շատ կարեւոր պահ՝ «բոլոր երթեւեկների»-ն եւ «բժշկել անվճար»-ը: Մեզ համար կարեւոր եկեղեցական այդ փաստաթղթում ասված չէ, որ պետք չէ ընդունել բոլորին (իսկ դա 11-րդ դարն էր, եւ Ռուսաստանի դարձից անցել էր ընդամենը 100 տարի, եւ բնականաբար բոլորը չէին կարող միանգամից քրիստոնյա դառնալ. այդ շրջանում Ռուսաստանը դեռեւս ավելի շատ հեթանոս էր), ընդհակառակը՝ հրահանգված էր ընդունել բոլորին, եւ օգնությունն էլ իրականացնել անվճար:

Տիպիկոնի, այսինքն՝ եկեղեցական կանոնադրության մեջ ասված է, որ վանքը պետք է ունենա հիվանդանոց եւ հոգ տանի ծերերի մասին, զբաղվի նաեւ պանդխտընկալությամբ: Տիպիկոնի առաջին հատորի 46-րդ գլխում ասված է. «Վանահայրը պետք է ջանա, որ հիվանդներին՝ թե՛ վանքում ապրողներին եւ թե՛ երթեւեկներին, բժշկեն՝ ծանր դեպքերում շտապ բուժօգնություն տրամադրելով... Եվ եթե վանքում վանականները եւ աշխարհիկները հանկարծ հիվանդանում են... վանահայրն անմիջապես պետք է այցելի նրանց եւ նրանց՝ բուժվելու պատրաստակամության մասին կարծիքն առնելուց հետո հանձնարարի պահանջվելիքը կատարելու»:

Տիպիկոնից քաղված այս հատվածից տեսնում ենք, որ հանձնարարվում է բոլորին, ասել է թե՝ ե՛ւ հավատացյալներին, ե՛ւ հեթանոսներին եւ թե՛ այլադավաններին օգնություն ցույց տալ:

Այլ կերպ լինել չէր էլ կարող: Չէ՞ որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը պատվիրեց աղոթել բոլորի համար, նույնիսկ՝ թշնամիների, եւ անգամ ներեց Իր թշնամիներին: Սուրբ Ստեփանոս Նախավկան աղոթում էր այն հրեաների համար, ովքեր քարերով սպանում էին իրեն: «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր դրանց» (Գործք Է 60): Սրա համար է հենց, որ մենք պետք է բուժենք ու օգնություն ցուցաբերենք բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, այդ թվում՝ նաեւ մեր թշնամիներին, նաեւ մեր հայրենիքի թշնամիներին, ինչը եւ արվում էր վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Մեր անձնվեր ու հերոսական բուժքույրերը, սանիտարները, ֆելդշերները, բժիշկները ռազմի դաշտում եւ հոսպիտալներում օգնություն էին ցույց տալիս նաեւ մեր թշնամիներին՝ հիտլերականներին, եւ այդ մարդասիրական վերաբերմունքը հիվանդների եւ տառայալների հանդեպ, անկասկած, իր արմատներով գնում է դեպի մեր քրիստոնեական ծագումը:

Այս առնչությամբ մեզ համար խիստ ուսանելի է անցյալ դարի սքանչելի բժիշկ Ֆեոդոր Պետրովիչ Գաազան (*Ֆրիդրիխ-Ժոզեֆ Հաաս, գերմանական ծագումով ռուսական բժիշկ: Ծնվել է 1780 թ. Բադ-Մյունստերայֆելում, մահացել 1853 թ. Մոսկվայում: 1806 թվականից մինչ իր մահը աշխատել է որպես բանտային բժիշկ Ռուսաստանում: Դավանանքով կաթոլիկ էր: Նրա անմիջական ջանքերով է Ռուսաստանում վերացվել ոչ միայն կալանավորներին ոտնաշղթաներ հագցնելը, այլեւ կանանց կեսգլուխների սափրումը: Նրա նախաձեռնությամբ բացվել է բանտային հիվանդանոց եւ բանտին կից դպրոց՝ բանտում ծնված երեխաների համար:*

*Շարունակությունը՝ էջ 8*

# ԸՆԴՀԱՏՎԱԾ ԿՅԱՆՔ՝ ԹՌԻՉՔԻ ՊԱՀԻՆ...



Սկիզբը՝ էջ 7

Նա Հուշն ու Հիշողությունը բերեց ու շաղկապեց ներկային, անցավորը՝ անանցին, ակնթարթը՝ ժամանակին եւ ժամանակն էլ հավերժականի մեջ տարրալուծելով՝ կողք կողքի դրեց մարդկայինը թիթեռնիկի կյանքի հետ, իր նախնիներինը՝ իր: Դիտենք նրա «Թիթեռնիկը» կտավը: Կիսով չափ բացված պատուհանից այս կողմ՝ աջում, դեպի հեռուն գնացող դեռատի մի կին է կանգնած: Թեպետ նա հաստատուն կեցվածք ունի, սակայն հեռուն անորոշ է, անառարկայական: Դա մեզ հասկանալի կյանքն է՝ «ստվերված» լուսավոր ու նաեւ մշուշոտ հեռանկարով, իսկ ձախում՝ սեղանին ընկած լույսի շեղբի մեջ անհոգ նստած է թիթեռնիկը՝ գունեղ, ինչպես այդ փոքրիկ ու տեսանելի աշխարհը՝ պատուհանից այս կողմ: Սակայն մարդու կյանքի տեւողությունը հավերժության մեջ էապես նույնն է. այն նման է թիթեռնիկի մեկ օրվան:

Դեռեւս իր վաղ շրջանի գործերում՝ «Իմ նախնիները», «Կեսօր», «Ընտանիք», «Հին օրհնություն», «Ինքնանկար», բացորոշ նկատվում էին նկարչի որդեգրումները՝ թե՛ ոճական եւ թե՛ աշխարհընկալման առումներով: Ասես աննկատելիորեն, վրձին առ վրձին փոխվում են տաք ու հագեցած գույները, մտերմիկ ու սահուն գծերը, առօրեական թեմաներն ու սյուժեները: Հետագա հորինվածքներում արդեն ոչ միայն վերջնականապես մշակվեց նկարչի պլաստիկական ձեւամտածողությունը. սառը գույներով խորքային ջերմություն, դեպի վեր սլացող հատու ռիթմիկայով պատկերներ ստեղծելու հմտությունն ու վարպետությունը, այլեւ հստակորեն կանխորոշվեցին նրա նախասիրած հիմնական թեմաներն ու մոտիվները:

Վարոս Շահմուրադյանի գործերը դրոշմի պես իրենց մեջ կնքված ունեն մարդ արարածի երկփեղկվածության ու ինքնակենտրոնացումի, լույսի ու խավարի, սիրո եւ ատելության, չարի ու բարու, կյանքի ու մահվան խորհրդածությունները: Դրանք հնչում են որպես խղճի համանվագներ՝ արտաքնապես պարզ ու զուլալ, խորքում՝ բարդ ու առեղծվածային: Հերթափոխելով եւ կողք կողքի դնելով լույսն ու ստվերը՝ տարանջատվում եւ միաժամանակ մերձենում են գարունն ու աշունը, մարդն ու առարկան, դրվագն ու ամբողջականը, սահմանայինն ու անսահմանությունը («Սոնատ. Գարուն-աշուն», «Նկարչուհու արվեստանոցում», «Մեղեդի», «Զոն», «Սենյակ թիվ 13» եւ այլն): Այդպես է մեռնում ու հարություն առնում օրը, այդպես կառուցվում է մարդկային կյանքի հերթափոխության գաղափարը, այդպես է հավերժում մեծ կյանքի՝ բնության ոգին:

Վարոսի թողած ժառանգության մեջ քիչ չեն նաեւ գրաֆիկական գործերը, որոնք մեկ անգամ եւս փաստում են գծի սահուն ու ռիթմիկ անցումների, սեւ ու սպիտակով գունային վառ զգացողություն ստեղծելու նկարչի վարպետության մասին («Ինքնանկար», «Մայրություն», «Աթոռներով նատյուրմորտ», «Աճպարարուհին», «Սեւ սկահակով նատյուրմորտ» եւ այլն): Իսկ Շարլ Բոդլերի արձակ պոեմների մոտիվներով կատարած նրա գրաֆիկական թերթերը, որոնք թեպետ նկարիչը չէր նախատեսել որպես գրքի ձեւավորումներ, սակայն ներառվեցին Բոդլերի 1975 թ. հրատարակված հայերեն ժողովածուում եւ դարձան հայկական գրքի գրաֆիկայի լավագույն նմուշներից: Կրկին խորհրդանիշների օգտագործման շնորհիվ Վարոսին մեծապես հաջողվել էր վեր հանել բոդլերյան աշխարհի բարդ ու հակասական, խռովքների, տառապանքների եւ թախծի ողջ ենթատեքստերը՝ դրանք պարուրելով նաեւ ռոմանտիկական այն շնչով, որն առկա էր ոչ միայն բոդլերյան աշխարհում, այլեւ հենց իր:



Կյանքի վերջին տարիներին Վարոսը փորձեր արեց նաեւ քանդակագործության մեջ: Դժվար է ասել, թե որքանով քանդակը տեղ կունենար նրա ստեղծագործական կյանքում, սակայն այն մի քանի գործերը, որ նա կատարել է, խոսում են պլաստիկ արվեստում եւս նրա բնատուր շնորհի մասին: Եթե նրա գեղանկարչական գործերին ծանոթ չլինեինք, ապա կարող էինք ասել, որ Վարոս Շահմուրադյանը ապագա խոստումնալից քանդակագործ է: Բայց, ցավոք, այսօր դժվար է ըստ էության խոսել այդ մասին, քանզի նրա սկսածը շարունակություն չունեցավ: Իսկ նրա գեղանկարչական գործերը միանգամայն բավարար են՝ ասելու, որ հայ կերպարվեստը ժամանակից շուտ կորցրեց մի սքանչելի, ինքնատիպ ու մեծապես օժտված նկարչի:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

# «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ»

## ԶՐՈՒՅՑ

Սկիզբը՝ էջ 6

Եթե հավատք ունես, կարող ես հաղթահարել ցանկացած խոչընդոտ, նեղություն, աղքատություն: Իսկ եթե չունես, ինքդ չեղած տեղից էլ կստեղծես խնդիրներ, որքան էլ որ ամեն ինչով ապահովված լինես: Հավատավոր մարդը հաշտ է ամեն ինչի հետ, որովհետեւ հաշտ է Աստծու հետ: Նման մարդը, նման զավակը երբեք չի էլ մտածի, որ ծնողն ինչ-որ բան չի արել իր համար: «Արել են այն, ինչ կարողացել են: Իրենց կարողության չափով օգնել են, եւ եթե այդ կարողությունը քիչ է եղել, չի բավարարել մեր պահանջներին, է՜հ, ի՞նչ կարող ես անել. Աստվա՛ծ է մեզ տվել այդ ծնողներին»,- այսպե՛ս կմտածի:

**- Տե՛ր հայր, շատ ընտանիքներում երեխաների դաստիարակությամբ զբաղվում են ոչ միայն ծնողները, այլեւ տատիկ-պապիկները: Հաճախ մոտեցումները տարբեր են լինում, ինչն էլ այդ հողի վրա ծնում է որոշակի, երբեմն լուրջ հակասություններ: Ի՞նչ խորհուրդ կտաք:**

- Չեմ կարծում, թե դա այնքան լուրջ խնդիր է: Տատիկ-պապիկների կյանքի փորձառությունը, որպես կանոն, ավելի մեծ է լինում: Տարիների հեռվից իրենք մի տեսակ ավելի լավ են տեսնում այս կյանքի ունայնությունը, եւ նրանց համար կարծես ավելի են արժեւորվում սերը, ջերմությունը, գուրգուրանքը: Պետք չէ, որ ծնողները նեղվեն իրենց ծնողներից, թեկուզեւ նրանք մի քիչ երես են տալիս թոռնիկներին. իրենք էլ կմեծանան, տատիկ-պապիկ կդառնան, իրենք էլ նույնը կանեն: Որովհետեւ կտեսնեն, որ այս կյանքում ավելի մեծ արժեք չկա, քան սերը, ջերմությունը: Ոչինչ, որ այդ սերը կարող է մի քիչ տատիկ-պապիկավարի՝ ընդգծված արտահայտվել: Ինչ վերաբերում է դաստիարակելուն, դա, իհարկե, նախ եւ առաջ ծնողների պարտականությունն է:

**- Եթե ընտանիքում բացակայում է հոգեւորը, ո՞վ է մեղավոր: Եվ ինչի՞ց պետք է սկսել:**

- Մեղավորը միշտ էլ ընտանիքի մեծն է: Ժողովրդական առածն ասում է. «Ծուռ ակոսը մեծ եզից է»: Ինչ վերաբերում է ինչպես կամ ինչից սկսելուն, դժվար է միանշանակ պատասխանել: Մեր ամբողջ զրույցը նաեւ այդ մասին էր: Թերեւս՝ դեպի մեր Արարիչը դեմքով դառնալուց, ճշմարիտ հավատքից: Մնացածը դրա ածանցյալներն են: Իսկ մեծ հաշվով դա աստվածային նախախնամության տիրույթն է. Աստծու Սուրբ Հոգին կորոշի՝ ինչպես, ինչից կամ ումից սկսել: Դավիթ թագավորին ընտրելիս Սամուել մարգարեն նրա բոլոր եղբայրներին պատկերացրեց որպես ազգի առաջնորդ՝ բացի Դավիթից: Ոչ էլ հոր մտքով կարող էր անցնել, մինչեւ անգամ մոռացել էր իր որդիների շարքում ամենափոքրի՝ ոչխարներ արածեցնող «աննշան» տղայի անունը հիշատակել:

Բայց Աստված հենց փոքրիկ հովվին՝ Դավթին էր ընտրել:

*Շարունակելի*

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# Հայոց Մեծ եղեռնի 95-ամյակի հիշատակությունը Կրասնոյարսկում

Վաղ առավոտից չէր դադարում մարդկանց հոսքը Կրասնոյարսկի Սբ Սարգիս եկեղեցի: Տեղի հայերը եկել էին գլուխ խոնարհելու մեր բյուրավոր նահատակների հիշատակի առջեւ եւ իրենց աղոթքը վերառաքելու առ Աստված՝ նրանց հոգիների հանգստության եւ խաղաղության համար: Հոգեհանգիստը տեղի ունեցավ եկեղեցու բակում կանգնեցված Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի առաջ: Կատարվեց նաեւ ծառատունկ: Այնուհետեւ կիրակնօրյա դպրոցի սաների եւ երիտասարդաց միության անդամների ջանքերով տեղի ունեցավ գեղարվեստական միջոցառում. հնչեցին բանաստեղծություններ, ազգային-հայրենասիրական երգեր ու պարեր: Իսկ երբ հնչում էր Հայաստանի Հանրապետության օրհներգը, ծածանվում էր քսան մետրանոց եռագույնը:



Միջոցառման ավարտին տեղի ունեցավ «Հայ ժողովրդի անմեղ զոհերի հիշատակին» կանգնեցված վերոհիշյալ խաչքարի բացման հանդիսավոր արարողությունը, որի բացումը կատարեց բարերարը՝ Արմիկ Ստեփանյանը:

Վերջում ժողովուրդը հրավիրվեց եկեղեցու ներքնահարկ՝ դիտելու ցեղասպանության թեմաներով նկարահանված վավերագրական կինոնկար:

*Տ. Շահան քհն. ՄՈՎՍԻՍՅԱՆ*

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

Սկիզբը՝ էջ 7

*Պայքարել է կալվածատերերի կողմից ճորտերին աքսորելու դեմ: Մեծ մարդասեր էր ու բարեգործ: Նա իր ողջ ունեցվածքը ծախսում էր բարեգործության վրա: Նրա անունն է կրում Սանկտ-Պետերբուրգի ֆեդերալ ծառայության քրեակատարողական վարչության հիվանդանոցը: Վերջերս Կաթոլիկ եկեղեցին սկսել է նրան սրբերի շարքին դասելու կանոնական գործընթաց - թրգ.):* Լինելով բանտային բժիշկ՝ նա օրվա բոլոր ժամերին՝ գիշեր թե ցերեկ, սիրահոժար գնում էր օգնելու բոլոր այն հիվանդներին, ովքեր իր կարիքն ունեին, եւ դա անում էր անվարձահատույց: Հենց նրա ջանքերով Ռուսաստանում բանտարկյալներից հանվեցին ոտնաշղթաները: Նա հարուստներից ստանում էր մեծ գումարներ, սակայն երբ մահացավ, պարզվեց, որ իրեն թաղելու համար իսկ ոչինչ չուներ, քանզի նա իր ողջ ունեցվածքը բաժանում էր աղքատներին եւ կամ ծախսում նրանց բուժման վրա:

Այդ «սուրբ բժիշկը», այդպես էր կոչում նրան ժողովուրդը, այդպես էր դրսեւորում բժշկի՝ իր մասնագիտության վեհությունը: «Ամենահուսալի ճանապարհը դեպի երջանկություն երջանիկ լինելու ցանկությունը չէ, այլ ուրիշներին երջանիկ դարձնելը: Դրա համար պետք է ուշադիր լինել մարդկանց կարիքներին, հոգ տանել նրանց մասին, չվախենալ գործից, օգնել հիվանդներին խորհուրդներով, գործերով ու խոսքով, սիրել նրանց: Ի դեպ, որքան հաճախ ցուցաբերեք այդ սերը, այնքան ուժգին այն կգործի» («О самовоспитании врача» (Բժշկի ինքնադաստիարակության մասին), М., 1971, стр. 57): Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ բժիշկ Գաազայի գերեզմանին փորագրված է «Շտապեք բարի՛ն գործել» հորդորը:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Ռուզաննա ԱՐՈՅԱՆԻ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
17.05. 2010 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**